

23830

ԳՆԸ 75 ԿԱՊ.  
ЦЕНА 75 КОП.

Վ. ՅԵ. ԱՆԴՐԵՅԵՎ

ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՃՆԱՄԻՆ Ե

331.87  
Ա-58

331-87

Ա-58

Վ. ՅԵ. ԱՆԴՐԵՅԵՎ

15 JAN 2010


**ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԹՇՆԱՄԻՆ Ե** ██████████

Թարգմ. Հ Մ.



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»  
ԹՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933





49776 км



3424-53



Книгоиздательство  
„Северный Кавказ“

ԿՈՎԵԼ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԿՈՎԵԼ ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՈՒԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեր յերկրի ինդուստրացման հաջողությունները և նրա հիմունքով խորհրդանշանաբանությունների, ՄՏԿ-ների ու կոլտնտեսությունների ուժեղ զարգացումը ապահովեցին չքավոր-միջակ մասսաների վճռական ու մասսայական շրջադարձը դեպի կոլեկտիվացում: Չքավոր-միջակ տնտեսությունների արտադրության հիմնական միջոցների համայնացման և մեքենայական բարձր տեխնիկա մտցնելու հիմունքով ստեղծվեցին խոշոր կոլեկտիվ տնտեսություններ, վորոնք ունեն հազարավոր հեկտար ցանքեր, հազարավոր յժկաններ, հազարավոր աշխատունակ բնակչություն: Այս տնտեսությունները ղինված են գյուղատնտեսական ամենաբարդ մեքենաներով, վորոնք առաջ չեյիր տեսնի մեծատնտեսական գյուղի դաշտերում (տրակտորներ, կոմբայներ, տրակտորային ցանիչներ, խուրձկապներ և այլն):

«ԽՍՀՄ դարձավ աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսության յերկիր: Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ յերկրագործության կենտրոնական դեմքը, իսկ կոլտնտեսությունները—հացահատիկների և գյուղատնտեսական հումույթի հիմնական արտադրողները...» ԽՍՀՄ հացահատիկային և հումույթային ռայոններում ավարտվում է կուլակի, իրելվ դասակարգի, վերացումը» (ՀԿ(ը)Կ Կենտկոմի հունիսյան պլենումի վորոշումներից):

Այս համաշխարհային—պատմական հաղթանակը փայլուն կերպով հաստատում է կոլտնտեսության և նրա Կենտկոմի գլխավոր, լենինյան գծի ճշտությունը և ապացուցում է օպորտունիստների կատարյալ սնանկությունը:

Գյուղատնտեսության մեջ խոշոր, կոլեկտիվ տնտեսությունը պահանջեց տնտեսության բոլորովին նոր կազմակերպում, ուժերի ու արտադրության միջոցների բոլորովին այլ դասավորություն, նոր ձևով աշխատանքի կազմակերպում: Հասկանալի յե, վոր այդ իմաստով

25827

ԿՈՎԵԼ ԴԻՄԱԶՐԿՈՒՅՑԱՆ ԴԵՄ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Ե ԿՈՎԵԼ ԿՈՆՏՆՏԵ-ՍՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՊՈՂԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Մեր յերկրի ինդուստրացման հաջողությունները և նրա հիմունքով խորհանտեսությունների, ՄՏԿ-ների ու կոլտնտեսությունների ուժեղ զարգացումը ապահովեցին չքավոր-միջակ մասսաների վճռական ու մասսայական շրջադարձը դեպի կոլեկտիվացում: Չքավոր-միջակ տնտեսությունների արտադրության հիմնական միջոցների համայնացման և մեքենայական բարձր տեխնիկա մտցնելու հիմունքով ստեղծվեցին խոշոր կոլեկտիվ տնտեսություններ, վերոնք ունեն հազարավոր հեկտար ցանքեր, հազարավոր լծկաններ, հազարավոր աշխատունակ բնակչություն: Այս տնտեսությունները ղինված են գյուղատնտեսական ամենաբարդ մեքենաներով, վերոնք առաջ չեյիք տեսնի մենատնտեսական դյուղի գաշտերում (տրակտորներ, կոմբայններ, տրակտորային ցանիչներ, խուրձկապններ և այլն):

«ԽՍՀՄ դարձավ աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսության յերկիր, Կոլտնտեսային գյուղացիությունը դարձավ յերկրագործության կենտրոնական դեմքը, իսկ կոլտնտեսությունները—հացահատիկների և գյուղատնտեսական հումույթի հիմնական արտադրողները..... ԽՍՀՄ հացահատիկային և հումույթային ուայոններում ավարտվում է կուլակի, իբրեւ գասակարգի, վերացումը» (ՀԿ(բ)Կ Կենտկոմի հունիսյան պլենումի վորոշումներից):

Այս համաշխարհային—պատմական հաղթանակը փայլուն կերպով հաստատում է կուսակցության և նրա Կենտկոմի զլխավոր, լենինյան դժի ճշտությունը և ապացուցում է ուղորտունիստների կատարյալ սնանկությունը:

Գյուղատնտեսության մեջ խոշոր, կոլեկտիվ տնտեսությունը պահանջեց տնտեսության բոլորովին նոր կազմակերպում, ուժերի ու արտադրության միջոցների բոլորովին այլ դասավորություն, նոր ձևով աշխատանքի կազմակերպում: Հասկանալի յե, վոր այդ իմաստով



35/33-62

չեր կարելի ոգտագործել անհատական տնտեսութիւնից մնացած մի վորեւս փորձ:

Գյուղատնտեսական խոշոր, կոլտնտեսային արտադրութեան կազմակերպման գործում մենք զեկավարվում ենք արդունարեբութեան փորձով, բանվոր դասակարգի փորձով: Ինչպես գիտենք, դեռ 1929 թվականին կուսակցութիւնն և արհմիութիւնները մտելիզացեայի յենթարկեցին գործարանները ու ֆաբրիկները 25 հազար լավագույն բանվորներին՝ գյուղում աշխատելու համար: Այս բանը հսկայական նշանակութիւն ունեցավ: Ներկայումս քսան հինգ հազարայինները հանդիսանում են կոլտնտեսային արտադրութեան լավագույն զեկավարները:

Խոշոր, կոլեկտիվ տնտեսութիւն կազմակերպելիս, անհրաժեշտ է նաև վորքան կարելի յի շատ ոգտագործել այն լավագույն փորձերը և որինակները, վորոնք արդունք են կոլտնտեսային գյուղացիութեան ստեղծագործական մեծ ակտիվութեան: Կոլտնտեսութիւններում մենք ունենք իսկական սոցիալիստական աշխատանքի բազմաթիվ գեղեցիկ նմուշներ:

Սակայն, կոլտնտեսային արտադրութեան կազմակերպման մեջ խոշոր նվաճումներն հետ, կան նաև մի շարք լուրջ թերութիւններ: Հիմնական ու զլխավոր թերութիւնները սովորաբար լինում են աշխատանքի կազմակերպման մեջ, ուժերը չեն դասավորվում այնպես, վոր ապահովվի աշխատանքի առավել բարձր արտադրողականութիւնը:

Լենինը սովորեցնում էր, վոր—

«Աշխատանքի արտադրողականութիւնը— դա վերջին հաշվով ամենակարևորն է, ամենազլխավորը՝ նոր-հասարակակարգի հաղթանակի համար»:

Արդյոք կարելի՞ յի ասել, վոր մեզանում աշխատանքի կազմակերպման ասպարիզում ամեն ինչ արված է, վոր մեզանում, այդ հիմնական աշխատանքում չկան թերութիւններ: Այդ դեռ չի կարելի ասել: Ընկեր Ստալինը 1931 թվի հունիսի 23-ին, տնտեսավարների խորհրդակցութեան մեջ արտասանած իր «Նոր պայմանները և տնտեսական շինարարութեան նոր խնդիրները» ճառում, աշխատանքների կազմակերպման վեց հիմնական պայմանների թվում շոշափեց նաև աշխատանքի կազմակերպումը՝ իբրև խիստ կարևոր խնդիր: Այդ ճառում նա ասում է.—

«Մեզանում դեռ ևս կան մի շարք ձեռնարկութիւններ, վորտեղ աշխատանքի կազմակերպումը վատից էլ վատ է գրված, վորտեղ, փոխանակ աշխատանքների կարգավորման ու համակերպման, տեղ ունեն անկարգութիւններն ու խառնաշփոթութիւնը, վորտեղ աշխատանքի հանդեպ պատասխանատվութեան փոխարեն

տիրում է լիակատար անպատասխանատվութիւնն ու դիմազրկութիւնը»:

Ձեռնարկութիւններում աշխատանքի կազմակերպման այս բնութեամբ մակելի մեծ չափով վերաբերվում է կոլտնտեսութիւններին: Մի շարք կոլտնտեսութիւններում գոյութիւն ունի մեծ խառնաշփոթութիւն և կատարյալ անպատասխանատվութիւն արտադրական աշխատանքներում: Այս անպատասխանատվութիւնը խիստ մեծ վնաս է հասցնում արտադրութեան: Յերբ կոլտնտեսութեան վարչութիւնը չգիտե, թե ինչ են անում բրիգադները, յերբ բրիգադները չի լինում դաշտում, արտադրութեան մեջ, յերբ ձիապանները հաճախակի փոխվում են և այլն և այլն,— այն ժամանակ ստեղծվում է հենց այն անպատասխանատվութիւնը, վորի մասին խոսում է ընկ. Ստալինը: Աշխատանքի այդպիսի սխալ կազմակերպման հիմունքով ընկ. Ստալինը տալիս է այդպիսի խառնաշփոթութեան ու անկարգութեան բնորոշումը: Նա ասում է.—

«Ի՞նչ բան է դիմազրկութիւնը: Դիմազրկութիւնը հանձնարարված աշխատանքի, մեխանիզմների, սարքոցների, դործիքների հանդեպ ամեն մի պատասխանատվութեան վերացումն է: Հասկանալի յի, վոր դիմազրկութեան դեպքում խոսք էլ չի կարող լինել աշխատանքի արտադրողականութեան վորևէ չափով բարձրացման, արտադրանքի վորակի բարելավման, դեպի մեխանիզմները, սարքոցներն ու դործիքները հոգատար վերաբերվելու մասին»:

Յեթե կոլտնտեսային արտադրութեան սկզբնական շրջանում անխուսափելի է յին աշխատանքի արտադրողականութեան թերութիւնները, ապա ավյալ մոմենտում կուսակցութիւնն առաջադրել է կոլտնտեսութիւնների կազմակերպչական տնտեսական ամբաղնդման խընդիրը, վորպես կենտրոնական խնդիր: Աշխատանքի ձիշտ կազմակերպումը, պայքարը դիմազրկութեան դեմ, հաշվառքի լավ դրվածքը,— ահա այն պայքարի զլխավոր խնդիրներից մեկը, վորը մղվում է կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տնտեսական ամբաղնդման համար:

Չի կարելի մի կողմ քաշվել աշխատանքի սխալ կազմակերպման, նրա ցածր արտադրողականութեան, նրա վատ վորակի և դիմազրկ դեկավարութեան դեպքերից, Դիմազրկութիւնը— դա կոլեկտիստային արտադրութեան ցեցն է, կոլեկտիստայինութեան մեղմած մեղմութի պատճառը յիվ ուղեկիցը, դասակարգային բռնամու գեցնը՝ կոլեկտիստայինութեան դեմ նրա մզած պայքարում:

Դիմազրկութեան դեմ պայքարը պիտի կազմակերպվի յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ: Այդ պայքարը պիտի մղվի ընկ. Ստալինի հատուկ ցույցմունքների հիմունքով, նա պիտի լինի կոլտնտեսու-

թյունները կազմակերպչական տնտեսական ամրապնդման առաջնա-  
կարգ խնդիրները մեկը: Դիմազրկութեան գոյութեամբ կոլեկտիվ  
տնտեսութեան կառուցել չի կարելի:

Կոլտնտեսութեանը դիմազրկութեան դեմ մղվող պայքարը  
հանդիպում է կոլտնտեսականների մեջ մանր սեփականատիրական  
ձգտումները ու սովորութեանները: Գնացորդներին, վորոնք ոգտա-  
գործվում են կուլակութեան թափթփուկների կողմից: Թեև կուլակու-  
թյունը վերջնականապես ջանջախմբ է, սակայն նա շարունակում է  
կատարել դիմադրել սոցիալիստական շինարարութեան: Անհրաժեշտ է  
հաշվի առնել XVI կուսակազմարի ցուցմունքը (կոլտնտե-  
սային շինարարութեան վերաբերյալ բանաձևում) վոր արտելում,  
կոլտնտեսութեան տվյալ ետապի այս գլխավոր ձևում—

«Վոչ թե ավաքսվում, այլ միայն սկսվում է հասարակական  
նոր դիսցիպլինայի, գյուղացիներին սոցիալիստական շինարա-  
րութեանը սովորեցնելու գործը: Կոլտնտեսութեաններում գյու-  
ղացիները, վերջնականապես կվերացնեն մանր սեփականատիրա-  
կան հողերանութեանը, մասնավոր տնտեսական կուտակման  
ծարավը (վոր ժառանգել են մանր մասնավոր սեփականատերերի  
սերնդից) միայն այն դեպքում, յերբ տարիներով համառ աշխա-  
տանք կատարվի, կոլտնտեսութեանները հիմնավորվեն խոշոր,  
մեքենայացված տնտեսութեան բազայով, յերբ համառ աշխա-  
տանք կատարվի, կոլտնտեսականներից կադրեր պատրաստելու  
համար, և կուլտուրապես բարձրանա ամբողջ կոլտնտեսային  
մասսան»:

Յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ պետք է ամենակատարի և  
մշտական պայքար մղվի դիմազրկութեան դեմ: Այստեղ պետք է  
վճռականապես խուսափել դիմազրկութեան դեմ ձևական պայքար  
մղելուց:

«Մի քանի ընկերներ կարծում են, վոր դիմազրկութեանը կարելի  
յե վոչնչացնել կոչերով, լայնահարող ճառերով, ըստ յերևույ-  
թին յեթադրելով, վոր այդպիսի ճառերից հետո դիմազրկու-  
թյունը պիտի չքանա, այսպես ասած՝ ինքնահոսի կարգով. «Վոչ,  
ընկերներ, դիմազրկութեանն ինքն իրեն յերբեք չի չքանա»:

(ՍՍԱԼԻՆ)

Ընկ. Ստալինի այս միանգամայն ճիշտ ցուցումները վորոշում են  
և այն ձևերը, վորոնք պիտի կազմեն դիմազրկութեան դեմ մղվող  
պայքարի հիմքը: Վոչ թե մեծադորդ ճառերը, այլ կոլտնտեսային  
արտադրութեան թույլ տեղերի ուսումնասիրման, մասնավորապես աշ-  
խատանքի կազմակերպման ուսումնասիրման մշտական ու մանրակր-  
կիտ աշխատանքը պիտի հիմք ծառայի դիմազրկութեան դեմ կազմա-

կերպված պայքար մղելու համար: Հարկավոր է յուրաքանչյուր դե-  
կավարի, յուրաքանչյուր կոլտնտեսականի զինել կոլտնտեսային ար-  
տադրութեան գիտելիքներով, ցույց տալ նրանց դիմազրկութեան դեմ  
կոլեկտիվ հիմնական մեթոտները, վերջապես, յուրաքանչյուրի վրա պա-  
տասխանատվութեան դեմ հանձնարարված աշխատանքի համար: Կու-  
տնտեսութեանները դեկավարները պետք է սովորեն ճիշտ դասավորել  
բանվորական ուժերը, ամբողջովին ոգտագործել արտադրութեան մի-  
ջոցները: Պետք է այնպես անել, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական  
պատասխանատու լինի իրեն հանձնարարված աշխատանքի համար:

«Եւրս է դալիս, վոր արտադրութեան մեջ այլևս չի կա-  
րելի տանել դիմազրկութեանը: Այդ հարիքից ազատվելու համար  
հարկավոր է նոր ձևով կազմակերպել աշխատանքը, հարկավոր  
է ուժերը դասավորել այնպես, վոր բանվորների յուրաքանչյուր  
խմբակ պատասխանատու լինի աշխատանքի, միխանիզմների,  
սարքոցների, աշխատանքի վորակի համար» (ՍՍԱԼԻՆ)

Այսպիսով աշխատանքի կազմակերպման արմատական հարցերից  
մեկը հանդիսանում է դիմազրկութեան վերացումը՝ մեխանիզմների,  
սարքոցների, գործիքների, այսինքն՝ արտադրութեան հիմնական մի-  
ջոցների ոգտագործման ասպարիզում: Կոլտնտեսութեան մեջ, յուրա-  
քանչյուր բրիգադի համար արտադրութեան այդպիսի միջոցներ են  
հանդիսանում կենդանի և մեքենայական քարշող ուժը, դաշտում և  
արհեստանոցում հասարակ ու բարդ մեքենան, գործիքները՝ դաշտում և  
արհեստանոցում, հաշվելով նաև այնպիսի ամենահասարակ գործիքներն,  
ինչպիսին են՝ փոցխերը, յեղանները, թիակները և այլն, ու վերջապես,  
հողամասը:

### ԲՐԻԳԱԴՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ, ՎԵՐԱՑՆԵԼ ԳԻՍԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՋ

Կոլտնտեսային արտադրութեան կազմակերպման փորձը ցույց է  
տվել, վոր աշխատանքի կազմակերպման հիմնական արտադրական  
միավորը, հիմնական ողակը հանդիսանում է բրիգադը, այն էլ այն-  
պիսի բրիգադը, վորը կառուցվում է արտադրական սկզբունքով, այ-  
սինքն՝ յերբ կոլտնտեսականների վորոշ կազմը զինված է արտադրու-  
թեան վորոշ միջոցներով, ամբողջված է աշխատանքի վորոշ տեղի և  
ստանում է արտադրական հաստատուն առաջադրութեան: Փորձը ցույց  
է տվել, վոր յերբ կոլտնտեսութեանը բաժանված է յեղել, այսպես  
կոչված՝ բրիգադ-բակերի, վորոնց մեջ մտել են տվյալ թաղամասի  
ծխերը, առանց հաշվի առնելու արտադրական խնդիրները,—վոչ մի  
արդյունք չի ստացվել: Բրիգադների այդպիսի կառուցվածքը և ան-

պետք է, և վնասակար: Այսպիսի բրիգադում տեղ ունի բանվորական ուժի հոսունութուն, կոլտնտեսականների անպատասխանատուութունը՝ իրենց հանձնարարված աշխատանքի համար, — դիմադրկութուն:

Աշխատանքի կազմակերպման արտադրական բրիգադային ձևը հասկանալի չէ յուրաքանչյուր կոլտնտեսականի: Հազիվ թե գտնվի մի կոլտնտեսական, վորը հակառակ լինի արտադրական միավոր հանդիսացող բրիգադին: Սակայն կան կոլտնտեսականներ և կոլտնտեսութուններ ղեկավարներ, վորոնք պաշտպանում են անպատասխանատուութունն, այսինքն, եյապես հանդիսանում են դիմադրկության պաշտպաններ:

Այս կոլտնտեսականներն ասում են, թե բրիգադները պիտի լինեն «ազատ», այսինքն չպիտի ամրացվեն հողամասերին: Նրանց կարծիքով միայն այս կերպ կարող են կոլտնտեսականները մասնագիտանալ աշխատանքի մեջ և այսպիսով կարող է բարձրանալ աշխատանքի արտադրողականութունը: Որինակ, կոլտնտեսության մեջ կազմվում է վարողների հատուկ բրիգադ, նրանից հետո պիտի աշխատի տափանոզների մասնագիտացված բրիգադը, սրանցից հետո — ցանողները և այլն: Այս մասնագիտացված բրիգադներն անցնում են հողամասից հողամաս, ամբողջ ժամանակ կատարելով միևնույն աշխատանքը: Գործնական աշխատանքներում այսպիսի բրիգադներն ստացել են «սողացող» կամ «սայթաքող» անուններ, վորովհետեւ նրանք չունեն վորոշ հողամաս, ուստի շատ դժվար է հաշվի առնել աշխատանքի վորակը, վորն անդրադառնում է բերքի վրա:

Դիմադրկ, «մասնագիտացրած», «սողացող» բրիգադների ստեղծումը պատճառաբանվում է հետեւյալով. —

1) «Մասնագիտացրած» բրիգադները տալիս են աշխատանքի ավելի բարձր արտադրողականութուն, համեմատած խառն բրիգադների հետ:

2) Այսպիսի բրիգադները դիմադրկում են հողամասերը, վորով վերանում է «սեփական» և «ուրիշի» հողամասերի հսկացողութունը բրիգադներում:

3) «Վոշ մասնագիտացրած» բրիգադներում չի կարելի զուգակցել արակտորների ու կենդանի լծկանի աշխատանքը:

4) Մասնագիտացրած չի կարելի մշակել մի քանի այնպիսի կուլտուրաներ, վորոնք պահանջելին հավասարաչափ աշխատանք, քանի վոր մի քանի բրիգադներ կարող են մշակել չափազանց շատ հացահատիկներ, իսկ շարքահերկ կուլտուրաներն էլ քիչ կլինեն, իսկ մի քանի բրիգադներում — ընդհակառակը:

Արդյոք մասնագիտացումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականութունը. ի հարկե բարձրացնում է: Այս բանը դիտե յու-

րաքանչյուր կոլտնտեսական: Սակայն մասնագիտացումը չի խանգարում բրիգադներն ամրացնելու հողամասերին: «Մասնագիտացրած» բրիգադների փոխարին ավելի ճիշտ կլինի մշտական բրիգադի մեջ ստեղծել մասնագիտացրած ողակներ կամ խմբակներ: Աշխատանքի փորձը ցույց է տվել, վոր «սողացող» բրիգադներն առանձնապես նրպաստավոր պայմաններ չեն ստեղծում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար: Այսպես, որինակ, ընկ. Ստալինի անվան կոլտնտեսության մեջ (Ստալրոպոլի ուայոն) այդպիսի բրիգադները 1931 թվականի գարնանացանի ժամանակ յերկխոփանի գութանով որական վարում էին 1,5 հեկտար, և ցանիչով ցանում 5 հեկտար: «Կրասնիյ Մայակ» կոլտնտեսության (Միլլերովոյի ուայոն) ամրացված բրիգադները յերկխոփանի գութանով մշակում էին մինչև յերկու հեկտար և ցանում մինչև 6 հեկտար, իսկ հարվածայինները ղերակատարեցին նաև արտադրութի նորմաները:

Մասսայական փորձը ցույց է տվել, վոր բրիգադները ամրացումն, այսինքն հողամշակման մեջ դիմադրկության վերացումը, բարձրացնում է աշխատանքի արտադրողականութունը, վոր յերեվում է 9-րդ եջում ղետեղված աղյուսակից:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման տեսակետից բրիգադները հողամասերին ամրացնելու առավելութունը կայանում է նրանում, վոր այսպիսով լիակատար պատասխանատուութուն է ստեղծվում աշխատանքի համար, առաջ է դալիս կոլտնտեսականների մեծ տկտիվութունը, ուժեղացվում է վերահսկողութունն աշխատանքի վորակի վրա և նպաստավոր պայմաններ են ստեղծվում մասնագիտացման համար:

Խոսելով «իլենց» և «ուրիշի» հողամասերի մասին, «սողացող» բրիգադների կողմնակիցները նկատի ունեն այն հանգամանքը, վոր մի շարք դեպքերում անհրաժեշտ է լինում բրիգադներին տեղափոխել հետամնացներին ոգնելու համար: Յեթե, ասում են նրանք, բրիգադը ամրացնես հողամասին, ապա նա վերջացնելով իր աշխատանքը, չի գնա մյուսներին ոգնելու: Դա, իհարկե, ճիշտ է: Գործավարձ մտցրնելիս, յեկամուտներն ըստ աշխատանքի քանակի ու վորակի բաշխելիս, վոշ մի բրիգադ, վոշ մի կոլտնտեսական չի հրաժարվի ոգնել հետմնացած բրիգադին: Բացի զրանից, հասարակական-մասսայական աշխատանքը, հարվածայնութունը — սրանք արտադրության իսկական բոլշեվիկյան ղեկավարման հոյր լծակներն են: Որինակ կարող է ծառայել «Կրասնիյ Մայակ» կոլտնտեսութունից (Միլլերովոյի ուայոն), կոլտնտեսական Տոլմաչևից ստացված հետեւյալ նամակը. —

«Հենց վոր մեր հողամասում ցանքը վերջացրինք, բրիգադերը 10 հոգի վարողների ղրկեց բրիգադներից մեկին ոգնելու:

Ենտեղ մենք աշխատում եյինք, վոնց վոր մեզ մտտ—հարվածա-  
յին եյինք աշխատում: 8 ժամում ցանեցինք 21 հեկտար: Սրա-  
նից հետո մեր բրիգադը զրկեցին ոգնելու 4-րդ բրիգադին, վոր-  
տեղ մենք 15 հոգով 2 և կես որում ցանեցինք 88 հեկտար: Հժ,  
միտք արինք, հիմի կհանդատանանք. ի՛նչ հանդիստ, ի՛նչ բան.  
բրիգադերը, թե՛ աղերք, հարկավոր ե ոգնության հասնել 3-րդ  
բրիգադին: Մենք լծեցինք ձիերը, գնացինք ոգնելու և ցանե-  
ցինք 36 հեկտար»\*)

Այսպիսով առաջավոր բրիգադը մյուս բրիգադներում ցանեց 145  
հեկտար:

Կոլսնեստահանների համար չկա իբ յեվ ուրիժի հոգամատ, այլ կա  
բնդհանուր կոլսնեստային հոգամատ, վորք պիտի ցանվի լիավին յեվ իբ  
ժամանակին, համաձայն կուսակցության ու կառավարության օված  
առաջադրութունների:

Հողը տրակտորով մշակելը բոլորովին չի խանգարում, վոր բրե-  
զագներն ամրացվեն հողամասերին: Հարկավոր ե միայն արտադրա-  
կան պլանում նախատեսել տրակտորի աշխատանքը և այնտեղ, վոր-  
տեղ հարկավոր ե, ավելացնել նրանցով մշակվելիք հողերի տարածու-  
թյունը, նրանց թողնել բրիգադների սահմանների միջով, քանի  
վոր դժվար ե պատկերացնել այնպիսի սահմաններ, վորոնցով չանց-  
ներ տրակտորը: Աշնանավարը կամ ցանքը միշտ կարելի յե կատարել  
իրար կից բրիգադային հողամասերում, ձգտելով աշխատանքի համա-  
պատասխան արտադրողականություն:

Վերջապես, վորպեսզի կարիք չլինի բազմատեսակ բանվորական  
ուժ փնտռել, միշտ կարելի յե կատարել կուլտուրաների համապատասխան  
ընտրություն, մտցնելով այս կամ այն ցանքաշրջանառությունը: Կա-  
րիք չկա, վոր յուրաքանչյուր բրիգադ ցանի մի քիչ արեվածադիկ,  
մի քիչ ցորեն, յեգիպտացորեն, դարի, վարսակ, գենադերչակ և այլն:  
Յուրաքանչյուր բրիգադ պետք ե ունենա շարքահերկ և հայահատի-  
կային ցանք: Շարքահերկ ցանքում կարող ե լինել միայն յեգիպտա-  
ցորեն կամ գենադերչակ, քանի վոր նրանց քաղհանի ու բերքահավա-  
քի մեջ չկա մի առանձին տարբերություն:

\*) Պարվածք «Ударник колхоза» հանդեսի 1931 թվի № 1-ից:

Այստեղ մենք բերում ենք այդ քաղվածքը. ապացուցելու համար, վոր բանվո-  
րական ուժի ճիշտ կազմակերպման դեպքում, «իր» և «ուրիշը» աշխատանքի հասկա-  
ցողությունը նշանակություն չունի: Սակայն կուլտուրաների մեջ արտադրության  
միջոցների բաշխումը պարզապես անհավասարաչափ ե, յեթե բրիգադը զարնան ըն-  
թացքում բուկսիբի միջոցով կարող եր մշակել 145 հեկտար. քանի վոր այդ կուլտու-  
րությունը բաղկացած ե առանձին գյուղացիներից, ապա ըստ յերեվույթին՝ այն-  
տեղ գոյություն են ունեցել առանձին բրիգադ-բաղկեր գյուղակների՝ ռաբկին ար-  
տադրության միջոցներով, վոր, իհարկե, սխալ ե:

Վոր կուլտուրաներում ինչ աշխատանք ե կատարվել	Սահմանված նոր- մաները (հեա) 1930 թ. փոքրի հիման վրա, օտարացի բրիգադների գնե- թում	Արտադրու- յթի մի- ջին նորմաները (հեկտ.) կուլտու- րություններում 1931 թ. ամբողջ- վելուց հետո	Հարկածայինները արտադրութի նոր- մաները (հեկտ) 1931 թվ. ամբողջվելուց հետո
«Ժիլտոտնովոյ» գ. տ. արտել (Պրիկում- սկի ուսյոն): Վարը բուկիկերով . . . . .	1,25	1,50	1,80
«Կոմունար» գ. տ. արտել (Պրիկումսկի ուսյոն): Վարը յերեք խոփանի գութա- նով . . . . .	1,50	1,50	1,75
Տափանումը յերկողակ տափանով 1 անգամ . . . . .	4,00	5,00	6,50
Ցանք 12 դիսկանի ցանիչով խաղողա- բուծարանների փորվումը ձեռքով . . . . .	5,0	5,00	6,5
«Կրասնիյ պախար» գ. տ. արտել (Շե- չնիկոյի ուսյոն) . . . . .	0,07	0,08	0,15
Վարը մի խոփանի գութանով . . . . .	0,5	0,65	0,8
Ցանքը 12 դիսկանի ցանիչով «Լենին- յան ուլի» գ. տ. արտել (Կրասնոգարի ուսյոն) . . . . .	3,0	3,6	4,1
Մարը մի խոփանի գութանով . . . . .	0,56	0,69	—
Տափանումը մի անգամ . . . . .	1,73	2,0	—
Շարքահերկի ցանք . . . . .	3,0	4,0	—
Շարքահերկերի քաղհանավար . . . . .	0,95	1,5	—

Իերենք մի որինակ, վորը ցույց ե տալիս, թե ինչպես չպետք ե  
կուլտուրաները բաշխել բրիգադների հողամասերի վրա: Հյուսիսային  
Ոսեթիայում, ընկ. Միկոյանի անվան կուլտուրաների մեջ մշակվում  
եր 12 կուլտուրա, իսկ յուրաքանչյուր բրիգադ—8—9 կուլտուրա:  
Որինակ № 5 բրիգադը ցանեց յեգիպտացորեն, կենաֆ, սոյա, արեվա-  
ծաղիկ, աշնանացան ցորեն, կանաչ կեր, հատապտուղներ, կերի ճակն-  
դեղ: Կուլտուրաները մանր-մունը չափերով բաժանել են բրիգադներին  
վրա. 100 հեկտար կենաֆ ցանել են 13 բրիգադներ—ամեն մեկը միջին  
թվով 7—8 հեկտար, 9 բրիգադ ցանել են 158 հեկտար սոյա, 20 հեկ-  
տար դդում ցանել են 3 բրիգադներ, 60 հեկտար կերի ճակնդեղ—8  
բրիգադներ և այլն: Պարզ ե, վոր այսպիսի բաշխումը նպաստում էր  
բանվորական ուժը մեծ չափով բաժան-բաժան անելու, մանավանդ,



վոր հաճախ մի քանի աշխատանքները դուրս դրվում են, հարկավոր  
հր լինում մի անգամից աշխատել մի քանի հողամասերում և այլն:  
Այս յերեվույթից պիտի խուսափել: Նա չի նպաստում կոլտնտեսու-  
թյունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման:

Յերբ հողամասը կանոնավոր եկազմակերպված, յերբ նա բաժան-  
ված է ցանքաշրջանառության դաշտերի և ըստ կուլտուրաների, կարելի  
յի իջեցնել աշխատանքի լարվածությունը: Կոնստիտուցիոնալ «Լե-  
նինյան ուղի» կոլտնտեսության ցանքաշրջանառության դաշտերի բաշ-  
խումը բրիգադների վրա՝ բավական համողիչ կերպով ցույց է տալիս  
այդ բանը: Այսպես, որինակ, № 5 բրիգադը մշակում է աշնանացան ցորեն  
և յեզիպտացորեն, № 8 բրիգադը — աշնանացան ցորեն և արեվածա-  
դիկ, № 10 բրիգադը — դարնանացան հացահատիկային ցանքեր, դենա-  
դերչակ և այլ շարքահերկ կուլտուրաներ:

Մի քանի դեպքերում, նայած հողամասի առանձնահատկություն-  
ներին, կարող է ցանքաշրջանառություն մտցվել մեկ բրիգադի հողամա-  
սում, իսկ մի քանի դեպքերում ել ցանքաշրջանառությամբ կարող  
են ընդգրկվել մի քանի բրիգադներ: Այսպիսով վերջ կտրվի մեքենա-  
ների ու գործիքների ապարդյուն տեղափոխությունը՝ մի դաշտից  
մյուսը:

Արտադրական բրիգադները կազմակերպման հիմք պետք է դառ-  
նա բրիգադի նյութական շահագրգռվածությունն իր աշխատանքով:  
Այս հարցի մասին Հյուսիսային Կովկասի Յերկրկուսկոմի, Յերկրգործ-  
կոմի և Յերկրկոլտնտեսության վորոշման մեջ ասված է,

«Բրիգադի աշխատանքից ստացված ամբողջ խնայողություն-  
ը, համաձայն արդիին պլանով վորոշված նորմաների (վաներա-  
նյութեր, վերանորոգություն, կերեր և այլն), առանց ֆլաստու-  
ինվենտարի ու քարշող ուժի աշխատանքին, հատկացնել տվյալ  
բրիգադի կոլտնտեսականներին՝ խնայողությունը նրանց բաժա-  
նելով, ըստ հնարավորության՝ աշխատանքների ընթացքում»:

Պարզ է, վոր այդ կարելի յի անել այն դեպքում, յերբ բրի-  
գադն ունի մշտական կազմ, յերբ նրան ամրացված են հողամաս և  
արտադրության միջոցներ, վորոնց համար պատասխանատու յեն  
բրիգադի բոլոր անդամները:

Յեթե բրիգադի համար նյութական շահագրգռվածություն է սահ-  
մանվում, ուրեմն նրանք աշխատանքի վորակի համար ևս նյութա-  
կան պատասխանատվություն կկրեն: Այսպիսի պատասխանատու-  
թյուն չի կարող լինել այն բրիգադում, վորտեղ աիրում է դիմազեր-  
կությունը: Յեթե մի սեզոնի ընթացքում միևնույն հողամասի վրա  
աշխատում են 10 բրիգադներ, ապա դժվար է վորոշել, թե ով է մե-  
ղավոր վատ կատարված աշխատանքի համար, վորն արտաքուստ կարող

և լավ յերեվալ (վար առանց խոպան տեղեր թողնելու, բայց մանր-  
ցանք առանց թափելու, բայց նոսր, հունձ առանց բացատների, բայց  
հացահատիկների կորստով և այլն):

Անպատասխանատվության և աշխատանքի վատ վորակի փաս-  
տեր կան Արմավրի ռայոնի «Լենինյան ուղի» կոլտնտեսության բրի-  
գադներում: № 2 բանջարանոցային հողամասում չի ցանվել մեկ վան-  
դակ, մինչդեռ ըստ բրիգադի գրանցումների, այդ վանդակի համար  
աշխտեր են գրված կոլտնտեսականներին: Ցանողների բրիգադում  
ցանիչների արորները 30 սանտիմետրով ավելի լայն են դասավորվել,  
քան պահանջվում էր: Հետեվանքն այն յեղավ, վոր ցանքը նոսր  
դուրս յեկավ: Վարողների բրիգադում վարի խորությունը 14 սանտի-  
մետրի փոխարեն պակասել է մինչև 9—10 սանտիմետր: Այս բոլորը  
բարձրացնում է արտադրույթի նորման, բայց իջեցնում է վորակն  
ու բերքը: Ինտրեչինակու կոլտնտեսության մեջ մի դաշտում, վորտեղ  
բրիգադը գալի յեր ցանել, մյուս բրիգադը յերկրորդ անգամ ցանեց—  
նույնպես գալի:

Ամրացված բրիգադներում այսպիսի դեպքեր չեն պատահում,  
քանի վոր միևնույն հողամասի վրա բոլոր աշխատանքները կատա-  
րում է կոլտնտեսականների համարյա մշտական կազմը. վորը նյու-  
թական պատասխանատվություն է կրում իր աշխատանքի վերջնա-  
կան արդյունքի, այսինքն բերքի համար: Լավ աշխատանքի համար,  
վորով ապահովվում է բերքի բարձրացումը, ամրացված բրիգադը  
կարող է պարզև ստանալ: Այսպիսով պատասխանատվության հետ  
մեկտեղ նյութական ուղղակի շահագրգռվածություն է ստեղծվում բեր-  
քի բարձրացման համար:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմն իր 1932 թվի փետրվարի 4-ի վորոշման մեջ  
լավագույն կոլտնտեսությունների մասսայական փորձի հիման վրա,  
ճշգրիտ ցուցումներ տվեց բրիգադները հողամասերին ամրացնելու մա-  
սին և վորոշեց կոլտնտեսային արտադրական բրիգադի տիպը: Վո-  
րոշման մեջ ասա թե ինչ է ասված.—

«Գյուղատնտեսական լավագույն արտերների փորձի հիման  
վրա, Կենտկոմը նպատակահարմար է գտնում կոլտնտեսություն-  
ներում կազմակերպել կոլտնտեսականների մշտական կազմ ունե-  
ցող բրիգադներ, այսպես, վոր իրեն կանոն, այդպիսի բրիգադ-  
ները կատարեն գյուղագնտեսական բոլոր հիմնական աշխա-  
տանքներն ամբողջ տարվա ընթացքում, վորոշ հողամասերի վրա:  
Կոլտնտեսությունն այս բրիգադներին, նրանց աշխատանքի ժա-  
մանակի համար, հատկացնում է անհրաժեշտ մեքենաներ, ին-  
վենտար և լծկան, վորոնց դրության համար պատասխանատու  
յի ամբողջ բրիգադը: Կոլտնտեսականների աշխտերի գնահա-

տուժը պետք է բարձրացվի կամ իջեցվի՝ նայած բրիգադի կատարած աշխատանքի հաջողութան:

«Սակայն այդպիսի բրիգադները ստեղծումը չի նշանակում, թե չի կարելի բրիգադներին հողամաս ամրացնել (նայած տեղական պայմաններին, կոլտնտեսութան մեծութան, նրա կազմակերպվածությունը) վոչ թե ամբողջ գյուղատնտեսական սեզոնի, այլ միայն գյուղատնտեսական աշխատանքների վորոշ շրջանի (վար բերքահավաք) համար»:

Միայն բրիգադները հողամասերին ամրացնելով, այսինքն՝ հողամշակման մեջ դիմադրկությունը վերացնելով, հնարավորություն է ստեղծվում աշխատանքի արտադրողականության ամենաարագ բարձրացման և նյութական շահագրգռվածություն համար: Ներկայումս աշխատանքի կազմակերպման մի այլ սիստեմ չի կարող մեծ հաջողություն ունենալ: Ահա թե ինչու յուրաքանչյուր կոլտնտեսություն այժմ պիտի բրիգադները կազմակերպե արտադրական սկզբունքով և նրանց ամրացնե հողամասերին, վերացնելով դիմադրկությունը—կոլտնտեսային աշխատանքի վորակային ու քանակային բարձր ցուցանիշների այդ թշնամուն:

### ԴԻՄԱԶԻԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄՈՎ ԹԱՂԵՆՔ ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՇԱՎԱՍԱՐԱՆՔԸ

Բրիգադները հողամասերին ամրացնելով չի լուծվում յուրաքանչյուր կոլտնտեսականի՝ իրեն հանձնարարված աշխատանքի համար պատասխանատվության հարցը: Աշխատանքի արտադրողականության բարձրացումը, կոլեկտիվ տնտեսություն մեջ մեծ քանակությամբ մթերքի ստացումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ յուրաքանչյուր կոլտնտեսական լիովին պատասխանատու լինի իրեն հանձնարարված աշխատանքի համար: Բայց, քանի վոր պիտի լինի պատասխանատվություն, ուրեմն պետք է նաև կազմակերպել յուրաքանչյուր կոլտնտեսականի կամ մի փոքր խումբ կոլտնտեսականների աշխատանքի հաշվառքը:

Սրանից բխում է մի անհրաժեշտություն — պայքարել բրիգադներում աշխատող կոլտնտեսականների հոսունությունը դեմ, մասնագիտացնել աշխատանքները և խստորեն կիրառել մանր խմբակային և անհատական գործավարձը:

Մի քանի բրիգադներում հոսունությունն այլանգակ չափերի յե հասնում, մանավանդ այն կոլտնտեսություններում, վորտեղ գոյություն ունեն բրիգադակերը և, առհասարակ, վոչ արտադրական ըսկզբունքով կազմված բրիգադները: Բանվորական ուժի վատ հաշվառքի,

թույլ դիսցիպլինայի հետևանքով, շատ կոլտնտեսություններում աշխատանքի յեն յենում միայն անչափահասներն, առանց հասակավորների: Մյուս ուրը ներկայանում են ընտանիքի մյուս անդամները, վորոնք մինչ այդ դբաղված էին ուրիշ աշխատանքներով: Բացի դրանից, կոլտնտեսականների մի մասի անկանոն աշխատանքի յեղնելու պատճառով, բրիգադները ստիպված է ամեն ուր նրանց փոխարինել ուրիշներով: Այս բոլորի հետևանքն այն է լինում, վոր վոչ ընտանիքի փոխվող անդամները և վոչ էլ նրանց փոխարինող կոլտնտեսականները չեն կարողանում լիովին պատասխանատու լինել կատարված աշխատանքի համար: Յերբեմն կոլտնտեսությունների դեկավարներն աշխատանքի կազմակերպման թուլություն, բրիգադներում բանվորական ուժի հոսունություն մեղը գցում են հնգորյակներով անընդհատ աշխատանք մտցնելու վրա: Կասկածից դուրս է, վոր դա միայն պատրվակ է անձարակ դեկավարությունը թագցնելու համար: Փոխանակ կովելու արտադրական բրիգադի մշտական կազմի համար, փոխանակ ձգտելու, վոր կոլտնտեսականները մասնագիտանան իրենց աշխատանքում, նըրանք, այդ դեկավարները նպատու են հոսունություն: Իրենք, կոլտնտեսականները պետք է լավ հիշեն, վոր մասնագիտանալու աշխատանքի համար լիակատար պատասխանատվություն կրելու դեպքում, բարձրանում է աշխատանքի արտադրողականությունը, հետևապես, ավելանում է աշխորբի թիվը:

Հարկավոր է մեծ համառություն կիրառել ընկեր Ստալինի այն ցուցմունքը, թե—

«Աշխատանքը ճիշտ կազմակերպելու, ամեն մեկի պատասխանատվությունը վորոշ աշխատանքի համար՝ կազմակերպելու, բանվորների վորոշ խմբակները մեխանիզմներին, սարքոցներին ամրացնելու, վորակով և կվալիֆիկացիայով իրար համազոր հերթափոխությունները ճիշտ կազմակերպելու դեպքում, անընդհատ շարաթը կտա աշխատանքի արտադրողականության հակայական աճ, կբարելավվի աշխատանքի վորակը և արմատախիլ կարվի դիմադրկությունը»:

Առաջնորդի այս ցուցմունքը պետք է ընդունել, վորպես կոլտնտեսային աշխատանքի մարտական ծրագիր, և յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է պահանջե, վեր վերացվի հոսունությունը, վորը կատարյալ դիմադրկություն է ստեղծում աշխատանքներում:

Ինքնադրկությունը հետևում է նրա շահակիցը—հավասարանքը: Յերբ միեխոյն կոլտնտեսականն ամեն ուր անցնում է մեկ աշխատանքից մյուսը, յերբեմն էլ մեկ ուրում մի քանի աշխատանք է փոխում, շատ դժվար է հաշվի առնել նրա աշխատանքը: Այսպիսի դեպքերում բրիգադներն ու հաշվառիչը աշխատանքը հաշվի յեն անում ժամերով,

բանվորական որվա մասերով (քառորդ որ, կես որ, յերեք քառորդ որ), կամ ուղղակի մեկ բանվորական որվա համար գրում են մեկ աշխոր, անկախ նրանից, թե ինչ աշխատանք է կատարել կոլտնտեսականը:

Իերենք որինակ: Կրասնոդարի Նովոսիտարսկի գյուղի «Բոլշևիկ» կոլտնտեսութեան մեջ կոլտնտեսականներն որական կատարում են 5—6 աշխատանք: Ամեն մեկի աշխատանքի հաշվառք չի կատարվում, այլ միայն գրանցվում են աշխատանքներին մասնակցողները: Թղթի կատարների վրա յեղած գրանցումը հանձնվում է հաշվառչին, վորը նրատեղի է գյուղում և հավասարեցնում է արտադրութեանը: Որինակ, 22 բրիգադում 3 հեկտար արևածաղիկ քաղելու համար 25 կոլտնտեսականների գրված է 0,63-ական աշխոր: Սրա հետեանքով մարդիկ փոխվում են համարյա ամեն որ:

Ստարո-Մինսկու ռայոնի Ն. Իերեկյանկովսկու «Պրավդա» կոլտնտեսութեան մեջ, կաթնաապրանքային ֆերմայում մինչև գործավարձ մտցնելը և դիմադրկութեան վերացումը կիրառում էյին հետեյալը.— Կով կթողը նախրի միջից ընտրում եր իր ուղած կովը, վորն ավելի շատ կաթ է տալիս և ավելի հեշտ կթվում: Ամբողջ կթված կաթն իրար եր խառնվում և չափվում եր: Մտցված եր այսպիսի գործավարձ.— 70 լիտրի համար 1 աշխոր. կթված կաթի լիտրի թիվը բաժանվում եր 70 ի. ստացված թիվը—աշխորերը բաժանվում էյին կթողների քանակի վրա: Այսպիսի «գործավարձի» պայմաններում վոչ վոք չեր մտածում վոչ կթվող կաթի քանակի, վոչ կովերին կերակրելու, վոչ նրանց կուրծի և առողջութեայ, մասին: Կովը հիվանդանում եր և վոչ վոք չեր մտածում նրա մասին:

Ստարո-Մինսկու ռայոնի «Կոմունար» կոլտնտեսութեան կաթնաապրանքային ֆերմայում ևս տիրում եր դիմադրկութեանը և հավասարանքը: Հորթերը ծծեցնելու գործում դիմադրկութեանն այն հետեվանքն ունեցավ, վոր միայն ոգոստոս ամսում փչացավ 24 հորթ: Հովիվը 140 կով թողեց յեգիպտացորենի արտը: Կովերը չափից դուրս կերան, հիվանդացան և կաթը պակասեց 80 տոկոսով: Լավ և վատ աշխատող կոլտնտեսականներին միևնույն քանակութեամբ աշխորեր էյին տալիս: Որինակ, Յե. Անդրոս կովկթուհին 10 կովից կթում եր 30 լիտր կաթ, իսկ յերբ նույն կովերն սկսեց կթել Տվերինկովան, կաթի քանակը հատավ 80 լիտրի: Յերկուսն ել միևնույն քանակութեամբ աշխորեր էյին ստանում:

Իմադրկութեան և հավասարանքի շնորհիվ այս կոլտնտեսութեան մեջ կոլտնտեսականներն անկանոն են դուրս գալիս աշխատանքի: Որինակ, Վլասով Անդրեյը 50 որվա համար ունի ընդամենը 2, 5 աշխոր, Գլինենկոն—2,4 աշխոր: Սակայն հասարակական սննդի ֆոնդից մթերքներ տալիս հավասարանքն այլանդակ չափերի յեր հասնում, թե

հորթերը կերակրողները, թե հովիվը, թե վատ կթողը և թե ծուլն ամեն որ հասարակական ճաշ և սննդամթերքներ էյին ստանում:

Այս որինակները բավական համողիչ կերպով ցույց են տալիս, վոր կատարված աշխատանքի համար աշխորեր նշանակելու գործում հավասարանքն արդյունք է դիմադրկութեան:

Իմադրկութեան վոչնչացումն ու գործավարձի հաստատուն կիրառումը հեղաշրջում են մտցնում աշխատանքի արտադրողականութեան մեջ: Վերև հիշված «Պրավդա» կոլտնտեսութեան մեջ կովերը կթողներին ամբացնելուց հետո, ամեն մի կովի կաթը միջին չափով ավելացավ 5—9 լիտրով: Հիվանդացող կովերի քանակը պակասեց յերկու անգամ, կաթը հանձնելու պլանը ոգոստոսին կատարվեց 131 տոկոսով, սեպտեմբերին—113 տոկոսով: Կթողները, անասնապահն ու հովիվը աշխատում են գործավարձով և ստանում ըստ ցենտների (1 կթողին 1 ցենտների համար—մեկ ու կես աշխոր, հովիվին—0,37 աշխոր, անասնապահին—15 կովից 75 լիտրի համար—1 աշխոր): Հորթերին կերակրելու համար աշխորեր տրվում են ըստ նրանց կենդանի քաշի ավելացման (30 հորթերի որական աճը—18 կիլոգրամ, 100 որվա ընթացքում ստացված աճը—18 ցենտներ—130 աշխոր):

Նիկոլայեվսկի կոլտնտեսութեան մեջ (Մոզգոսկի ռայոն) բամբակի բերքահավաքման ժամանակ բրիգադներն ամբացված են վորոշ հողամասերի, իսկ յուրաքանչյուր կոլտնտեսականի տրված են հատուկ շարքեր: Յուրաքանչյուր կոլտնտեսականի կատարած աշխատանքները հաշվի յեն առնվում առանձին: Բրիգադներում արտադրական խորհրդակցութեաններում ջոկվում են հարվածային աշխատողներն ու ծուլները: Վերջիններիս դեմ կիրառվում են հասարակական ներգործման միջոցառումները—սե տախտակ, բոյկոտ: Նույնիսկ վոչ վոք չի թողնում, վոր իր կրակից նրանք ձխախոտ վառեն: Նրանց արհամարհում են: Ահա թե ինչու այստեղ քիչ չեն այնպիսի կոլտնտեսականները, վորոնք որական հավաքում են 38—40 կիլոգրամ բամբակ:

Կան աշխատանքի ձիշտ կազմակերպման, դիմադրկութեան և հավասարանքի վերացման բազմաթիվ լավ որինակներ: Այսպիսի որինակներ ցույց տվող կոլտնտեսութեաններում աշխատանքի արտադրողականութեանն աճում և ավելանում է լավագույն հարվածային կոլտնտեսականներին տրվող աշխորերի թիվը և միևնույն ժամանակ բարձրանում է ամեն մի աշխորվա վրա ընկնող յեկամուտը:

Մշտական պայքար մղելով դիմադրկութեան դեմ, գործավարձը կիրառելով խորհրդների 6-րդ համագումարի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4 ի վորոշումների հիման վրա, սոցմրցման և հարվածայնութեան ծավալման հետ միասին,—կոլտնտեսային աշխատանքի արտադրողականութեանը կբարձրանա յերկու անգամ կոլտնտեսային



հարվածայինները պետք է առաջինները կովեն բանվորական ուժի հոսունությանը բողոքովին վերջ տալու համար, վորը դիմադրկություն և հավասարանք է առաջ բերում կոլտնտեսային արտադրության մեջ, նրանք պետք է հակառակորտուն իստական պայքարի նախաձեռնողները լինեն: Ոպորտունիստներն աշխատում են սվադել հարվածայնությունը, «հավասարություն» են քարոզում, կուլակային հավասարանք են անցկացնում, սահղծելով կատարյալ անպատասխանատվություն հանձնարարված աշխատանքի համար:

«Այժմ համբերել բանվորական ուժի հոսունությանը, նշանակում է քայքայել մեր արդյունաբերությունը, վոչնչացնել արտադրական պլանների կատարումը, վիժեցնել արտադրական վորակը բարելավելու հնարավորությունը»: (ՍՍԱԼԻՆ)

Ընկ. Ստալինի այս խոսքերը, վորոնք ասված են արդյունաբերության վերաբերմամբ, ամբողջովին վերաբերվում են նաև կոլտնտեսություններին: Հոսունության, դիմադրկության և հավասարանքի վերացումը կոլտնտեսությունների մարտական խնդիրն է, նրանց կազմակերպչական-տնտեսական ամրապնդման խնդիրը:

## ԴԻՍԱԶՐԿՈՒՅՑՈՒՆԸ ՓԶԱՑՆՈՒՄ Ե ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԻՆ

Հյուսիսային Կովկասի կոլտնտեսություններում լծկան ձին մեծ նշանակություն ունի, չնայելով, վոր արագությամբ առաջ է գնում գյուղատնտեսական հիմնական աշխատանքների մեքենայացումը: Միայն կուլակության թափթիվները և նրա գործակալներն այժմ կարող են ասել, թե ձին պետք չէ, թե ձիերին պետք է վոչնչացնել, քանի վոր հողը տրակտորներով ենք մշակելու: Իժբախտաբար, կուլակային այդպիսի ազիտացիան վոչ բոլոր կոլտնտեսություններում է հանդիպում արժանի հակահարվածի: Մի քանի դեպքերում այդ ազիտացիան նույնիսկ հաջողություն ունի հետամնաց կոլտնտեսականների մեջ և նրա հետևանքով առաջ է դալիս անփոյթ վերաբերմունք դեպի ձին:

Նույնիսկ կոլտնտեսության ղեկավարների մի մասը պարզապես թերազնահատում է ձիու նշանակությունը, վորպես լծկանի, չնայելով, վոր կուսակցությունն ու կառավարությունը պարզ ցուցմունքներ են տվել այդ մասին: Այդպիսով կոլտնտեսականների նման ղեկավարներն ունենում են հասցնում կուլակին և նրա գործակալության: Ընկ. Յակովլևիվը (ԽՍՀՄ Հողօրդկոմ) կուսակցության 16-րդ համագումարին տված իր ղեկուցման մեջ ասաց.—

«Կոլտնտեսության մեջ առայժմ առանց ձիու տնտեսություն չես կառուցի: Հացահատիկային մեքենա-տրակտորային

կայանը սովորաբար ընդգրկում է մոտ 50 հազար հեկտար տարածութեամբ ցանքային տերրիտորիա, իսկ մոտակա տարիներում, իբրև կանոն, յուրաքանչյուր մեքենա-տրակտորային կայաններում աշխատանքների միայն մեկ յերրորդ մասը պիտի կատարվի տրակտորների միջոցով, իսկ յերկու յերրորդը— ձիերի միջոցով»:

Ընկ. Յակովլևիվը ղեկուցման առթիվ 16-րդ կուսհամագումարն իր վորոշման մեջ շեշտեց.—

«Աչքի առաջ ունենալով, վոր դեռևս մի շարք տարիների ընթացքում դաշտային աշխատանքների ժամանակ պիտի դուրս գալցվի տրակտորի և ձիու աշխատանքը, անհրաժեշտ է հոգատար վերաբերմունք ստեղծել դեպի ձին»:

Վերջապես Խորհրդների համամիութենական 6-րդ համագումարը կոլտնտեսային ձիու խնդրի մասին ընդունեց վորոշում այն մասին, վոր.—

«Ձիու քարշող ուժի վատնումը համագումարը համարում է կուլակային ազդեցության արտահայտություն և առաջարկում է խորհրդային իշխանության բոլոր որդաններին ամենավճռական պայքար մղել այդ յերևույթի դեմ»:

Չնայելով կուսակցության ու խորհրդային իշխանության բարձրագույն մարմինների այս ցուցմունքներին, մի շարք կոլտնտեսություններում գոյություն ունի ամենայլանդակ վերաբերմունք դեպի կոլտնտեսային ձին: Հետամնաց կոլտնտեսականները կուլակային ազիտացիայի ազդեցության տակ շարունակ ասում են, թե ձին իմա չէ, կոլտնտեսությանն է, այսպիսով իրենց հակադրելով կոլտնտեսության: ՎԱյստեղից ծագում են անպատասխանատվությունը, անփութությունն ու բարբարոսությունը կոլտնտեսային ձիու հանդեպ: Չարմանալի չէ, որ այս պայմաններում, նման կոլտնտեսություններում պակասում է ձիերի թիվը:

Կոլտնտեսային ձիու գլխավոր թշնամին դիմադրկությունն է՝ նրա խնամքի և ոգտագործման ասպարեղում: Ի՞նչ բան է խնամքի դիմադրկությունը: Դա կատարյալ անպատասխանատվություն է ձին կանոնավոր պահելու, իր ժամանակին կերակրելու, շենքը մաքրելու համար, այսինքն՝ այն ամենի համար, վորից գլխավորապես կախված է ձիու աշխատունակությունը:

Ձիու խնամքի գործում պատասխանատվություն ստեղծելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ աշխատող կոլտնտեսականներին յերկար ժամանակով, գոնե 1 տարով, ամրացնել ձիերին և նրանց վրա պատասխանատվություն դնել ձիու աշխատունակության համար: Եատ կոլտնտեսություններում դեռ մինչև այսօր դիմադրկությունը վոչն-

չացված չե, ձիերի վրա աշխատող կոլտնտեսականները փոխվում են համարյա ամեն օր, իսկ աշխատողների այդ հոսունությունը խիստ վնասակար ե ազդում ձիերի վրա:

Անցյալ 1931 թվին գոյություն ունեւ ձիապանների նշանակման կարգը: Դրա համար ձիերը բաժանվում էին խմբակների, ամեն մեկում 10—12 ձի, և յուրաքանչյուր այսպիսի խմբակի սպասարկում էր 1 ձիապան: Այս ձիապանները, շահագրգռված չլինելով ձիերի աշխատանքով, հաճախ անբարեխիղճ էին կատարում իրենց պարտականությունները: Բացի դրանից, նրանք հաճախակի փոփոխվում էին:

Այսպես, որինակ, Հանքային ջրերի ուսումնական «Առաջին հնգամյակի» կոլտնտեսություն մեջ, № 9 բրիգադում ձիապանները ձիերին ամրացվում են 3 ամսով, վորից հետո նրանց փոխարինում են ուրիշ կոլտնտեսականներ:

Այսպիսի փոփոխությունների հետևանքով բավարար ուշադրություն չի դարձվում պեպի ձին: Սպասելով մոտիկ հերթափոխության, կոլտնտեսականն աչքս լավ չի նայում ձիուն, և սա նոր խնամողին հանձնվում է վատ կերակրված, չմաքրած ե այլն: Ձի քշողներն էլ չեն ամրացված ձիերին և փոխվում են համարյա ամեն օր:

Կուրսավսկի ուսումնական կոմունայում 1 տարվա ընթացքում փոխվեցին մինչև 20 ձիապաններ, վորի հետևանքով ստեղծվեց կատարյալ անտնտեսավարություն և այլանդակ խնամք: Ամառվա ընթացքում 85 ձիուց 4-ը սատկեցին: Դրա համար վոչ վոք պատասխանատվության չի յենթարկված: Այսպիսով ընկ. Ստալինի անվան կոլտնտեսություն մեջ դիմադրկությունը դարձավ լծկան ձիու գերեզմանափորը: Վատ ձիերով աշխատող կոմունարները վատ էին կատարում արտադրությունի նորմաները:

Վեչենսկի ուսումնական «բուլդեի» կոլտնտեսություն մեջ ձիերին խնամելու համար ախոռներն էին ուղարկվում անչափահասները, կամ այս գործում բոլորովին անփորձ կոլտնտեսականները: Ձիերով աշխատողներն ստացան վատ կերակրված, կեղտոտ ձիեր և, իհարկե, չէին կարող կատարել իրենց նորմաները: Ձի քշողներն էլ հաճախակի փոխվում էին, ընկնում էին բարձր նորմաների հետևից և այսպիսով անտանելի վերաբերմունք էր ստեղծվում դեպի ձին:

Նույնպիսի դիմադրկություն էր տիրում նաև Կրասնոդարի ուսումնական կոլտնտեսությունի անվան № 2 կոլտնտեսություն մեջ: Այստեղ ձիերը (348 գլուխ) բաժանվել էին 9 խմբակների, ամեն մի խմբակում 35—40 ձի: Ամեն մի խմբակին խնամելու համար նշանակվել էին 6 ձիապաններ, — ընդամենը 54 մարդ: Նշանակվում էին ամենամաքորձ կոլտնտեսականները: Կոլտնտեսություն մեջ չկար մեկը, վոր պատասխանատու լիներ ձիերի ամբողջ քանակության համար: Ձմեռը ձիերին

լրովին խոտ չեր տրվում, այլ նրանք կերակրվում էին հարողով և մրդեղով: Այդպիսի այլանդակ դիմադրկության հետևանքով կոլտնտեսություն մեջ մեկ տարում ընկավ 54 ձի: Վոչ մի հանցավոր պատասխանատվության չկանչվեց:

Վերջապես շնորհիվ ձիերի դիմադրկ խնամքի և հսկողության լինում են նրանց «աննկատելի չքացման» դեպքեր: Սալսկի ուսումնական կոլտնտեսական արտելում հեռացել էին 8 ձի, վորոնք գտնվեցին «Վոսխոդ» կոչված ձիաբուժական խորհրտնտեսություն մեջ: Յերկու ամսվա ընթացքում վոչ մի կոլտնտեսական չնկատեց այս կորուստը: Միայն պատահմամբ խորհրտնտեսություն յեկած կոլտնտեսականները, տեսան իրենց ձիերին, վորոնց հետ աշխատում էին խորհրտնտեսություն մեջ: Այսպիսի անփուլթ վերաբերմունքն, իհարկե, առանց վատ հետևանքի չի լինում: Դիմադրկությունը նպաստում է կուլակի վնասարարական աշխատանքին: Որինակ, կոլտնտեսություններից մեկում դեղը կուտակելու ժամանակ «պատահմամբ» դեղի մեջ թաղվել-մնացել էր կենդանի ձի: Միայն նեխվող դիակի հոտի շնորհիվ կոլտնտեսականներն ուշադրություն դարձրին, վոր «պատահմամբ կորած» ձին թաղել են դեղի մեջ՝ դեղը կիտելու ժամանակ («սոցհեմլեդեիլե», 1931 թվի դեկտեմբ. 11):

Կոլտնտեսականները պետք է բոլոր ուժերով կովեն կոլտնտեսականին ձին անփուլթ պահելու դեմ և իր ժամանակին ջախջախեն կուլակության վնասարարական փորձերը, կուլակության, վորը տեղ-տեղ կոլտնտեսությունն է խցկվել: Ել ուրիշ ինչո՞վ, յեթե վոչ կուլակային վնասարարություն միտի բացատրել այն, ինչ վոր տեղի ունեցավ «Պչոլկա» կոլտնտեսություն մեջ (Տիմաշևսկու ուսումնական): 1931 թվին այստեղ մի լավ գոմ կառուցվեց 60 ձիերի համար: Յեվ հանցավոր անփուլթության, անգործունեության պատճառով դիշերը հրդեհ բռնկվեց գոմում, յերը ձիապանները քնած էին: 52 ձիուց միայն 4-ին հաջողվեց ազատել. մնացածներն այրվեցին: Ժողովրդական Կատարանում գործը քննելիս (մեծ թվով կոլտնտեսականների ներկայությամբ) պարզվեց, վոր կոլտնտեսությունը սաստիկ աղտեղված է կուլակային համախոհներով \*), հենց այս պատճառով էլ այնտեղ վնասարարության պայմաններ ստեղծվեցին, ու կոլտնտեսությունը զրկվեց ձիերից: Պրոլետարական դատարանը պատժեց\*) այս վնասարարության հանցավորներին: Այս փաստը ցույց է տալիս, թե ինչպես կուլակն աշխատում է ոգտազորձի կոլտնտեսային շինարարության բոլոր ձեղքվածք-

\* Ձիապան Դիրան, վորն ունեցել է մինչև 50 հեկտար հող և վարչության անդամ Ռեյտուր ունեղ գյուղացի, դատապարտվեցին 3 տարվա հարկազեր աշխատանքի: Նախագահ Չարաբին — նախկին խոշոր գնումներ կատարողը — 7 տարվա հարկազեր աշխատանքների:

ները, վորպեսզի պայթեցնեն կարգավորվող սոցիալիստական տնտեսութ-  
յունը:

Հավազույն լծկան ուժի պատասխանատվութիւնն ստեղծելու, ձի-  
յերով աշխատելու համար սխտեմատիկ ու հաջողակ պայքար մղելու  
նպատակով, ՀԿ(ք) Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմը, Յերկրկործ-  
կոմը և Յերկրկոլտնտնութիւնը վորոշել են՝

«Հունվար ամսի ընթացքում կոլտնտեսականներին ամրա-  
ցնել այն ձիերին, վորոնց հետ նրանք պիտի աշխատեն 1932  
թվականի ընթացքում: Կոլտնտեսութիւնն վարչութիւնն կազմից  
նշանակել մի անձնավորութիւն, վորը պետք է հատկապես պատաս-  
խանատու լինի լծկանի դրութիւնն և կերի ֆոնդերի ոգտագործ-  
ման համար»:

Այս վորոշմամբ արմատապէս փոխվում է ձիերի խնամքի կազմա-  
կերպման և նրանց հետ աշխատելու կարգը: Կոլտնտեսականն, ամբողջ  
տարով ամրացված լինելով ձիերին, պետք է աշխատի լավ խնամել  
նրանց, վորպեսզի շարունակ վոչ միայն կատարե, այլ և գերակատարե  
արտադրութի նորմաները: Ձիերին ամրացված կոլտնտեսականների  
պարտականութիւնների մեջ է մտնում հետևյալը.—

«Խնամել ձիերին, կերակրել, մաքրել, նորոգել ձիասարքը,  
կատարել ինվենտարների մանր վերանորոգում» (Հյուս. Կովկասի  
Յերկրկոլտնտնութիւնն 1932 թվի հունվարի 19-ի վորոշումը):

Կոլտնտեսականներին ամրացված յուրաքանչյուր մեկ գույք ձի-  
ունն ախոռում հատկացվում է մշտական տեղ, վորոշ գյուղատնտեսա-  
կան ինվենտար և ձիասարք, վորը պետք է ջոկված լինի յուրաքան-  
չյուր ձիու համար: Այսպիսով պատասխանատվութիւնն է սահմանվում  
ձիերի պահպանութիւնն, նրանց աշխատունակութիւնն և այն ինվեն-  
տարի և ձիասարքի համար, վորոնք անհրաժեշտ են աշխատանքների  
ընթացքում:

Այսպիսի կարգի դեպքում, ձիերն «անհետ կորչել» չեն կարող,  
քանի վոր կորչելու դեպքում կոլտնտեսականը պատասխանատու յի  
նրանց համար: Ձիերը թերի կամ չափից դուրս չեն կերակրվի, քանի  
վոր յեթե կոլտնտեսականը կանոնավոր չկերակրի նրանց, նրան հա-  
մապատասխան աշխուրհ չեն գրվի:

Ձիերի խնամքի և նրանց հետ աշխատելու նոր կարգը գործնա-  
կանորեն կիրառելիս, անհրաժեշտ է գործադրել մի շարք գործնական  
միջոցառումներ: Վերջիններս նախատեսված են հիմնականում Հյուսիս-  
ային Կովկասի Յերկրկոլտնտնութիւնն վորոշման մեջ:

Աշխատող կոլտնտեսականներին ամրացնելով ձիերին, անհրաժեշտ  
է ընտրել ձիերին խնամելու համար փորձված կոլտնտեսականների, վո-  
րոնք հասարակական ախոռին մոտ են ապրում: Սրանով պայմաններ

կատեղծվեն ավելի մանրակրկիտ խնամքի և հսկողութիւնն համար: Պարզ  
է, իհարկէ, վոր այդպիսի ամրացումը բոլորովին չի նշանակում, թե  
ձիերը պիտի բաժանվեն կոլտնտեսականների տներին վրա: Այդ տեսակ  
կուլակային առաջարկների և ձգտումների դեմ պետք է վճռական  
կռիվ մղել, քանի վոր այդ ըստ ելութիւնն նշանակում է խախտել ձիերի  
համայնացումը:

Վորովհետև ձիուն խնամելն ու հսկելը պահանջում է լրացուցիչ  
ժամանակ և աշխատանք, ուստի այդ աշխատանքի համար պետք է  
25 տոկոսով ավելացնել արվող աշխուրհը: Այս լրացուցիչ աշխուրհը  
պետք է ցուցակագրվեն սեզոնային աշխատանքները վերջնալուց  
հետո: Որինակ, յենթադրենք կոլտնտեսականին գարնանացանի հա-  
մար գրված է 100 աշխուր: Այս դեպքում ձիերին խնամելու համար նրան  
պետք է գրել նաև լրացուցիչ 25 աշխուր:

Ձիերին բանեցնող կոլտնտեսականին ոգնելու համար պետք է  
նշանակվեն ձիապաններ—կեր հայթայթողներ: Նրանց պարտականու-  
թիւնն է՝ կեր տանել, ախոռները մաքրել, սղբը դուրս տանել, գիշերը  
կողտ կերեր տալ և այլն: Այս ձիապաններն ևս պետք է պատասխա-  
նատու լինեն ձիերի դրութիւնն ու աշխատունակութիւնն համար: Յեթե  
ձիերը լավ դրութիւնն մեջ են և նրանց բանեցնողն այդպիսով հնարա-  
վորութիւնն ունի գերակատարել նորմաները, ապա ձիապաններին  
պետք է տրվեն լրացուցիչ աշխուրհ, իսկ յեթե խնամքը վատ է և  
ձիերի թուլութիւնն պատճառով նորմաները չեն կատարվում, ապա  
աշխուրհի քանակութիւնը պետք է պակասեցնել:

Այսպիսով ձիու խնամքի կարգը փոխվելով, վերանում է դիմա-  
գրկութիւնը և նյութական պատասխանատվութիւնն է սահմանվում  
ձիու համար:

Սակայն դիմագրկութիւնն վերացման միջոցները պետք է տարած-  
վեն նաև հղի ձիերի և քուռակների վրա: Ամենից առաջ հղի ձիերը  
պետք է ջոկվեն ու նրանցից պիտի կազմվի առանձին խմբակ: Այս  
ձիերին, ինչպես և մինչև 2½ տարեկան քուռակներին, պետք է ամ-  
րացնել ամենափորձված կոլտնտեսականներին: Սրանցով պետք է կա-  
տարել ամենաթեթեւ աշխատանքներ:

Ձիերի ծնելուց 2 շաբաթ առաջ պետք է դադարեցնել նրանց  
աշխատանքը:

Ձիերի աճման ուղղութիւնը կոլտնտեսականների շահագրգռվածու-  
թիւնը բարձրացնելու նպատակով, Հյուսիսային Կովկասի Յերկրկոլտնտ-  
նութիւնն վորոշմամբ՝ 25 աշխուրհ պարգևատրութիւնն է սահմանվում  
յուրաքանչյուր կենդանի ծնված քուռակի համար: Իսկ յեթե ձիւն վի-  
ժել է կոլտնտեսականի մեղավորութիւնը, ապա դրա համար նրանից  
հանվում է 30 աշխուր: Ձիապան կեր հայթայթողը յուրաքանչյուր

կենդանի ծնված քուռակի համար պարգևատրվում է 5 աշխորով, իսկ վիժման դեպքում նրանից հանվում է 8 աշխոր:

Մատաղ ձիերին խնամելիս, գործավարձ է մտցվում ըստ սպասարկվող կենդանիների քանակի (միջին թվով մեկ հասակավոր և 1 անչափահաս խնամողին 50 գլուխ): Մեկ տարվա ընթացքում 1 գլուխ անասնին խնամելու համար տրվում է 10 աշխոր: Անփուլթ խնամելու համար, — վորի հետևանքով անասունները սատկում են, — մեղավորները քրեյական պատասխանատվության են կանչվում և նրանցից դանձվում է սատկած կենդանիների արժեքը:

Մեկ տարեկանից մինչև աշխատելու հասակը մատաղ ձիերին սպասարկելու նորման է 40 գլուխ՝ մեկ հասակավոր կոլտնտեսականին և մեկ անչափահասին: Նրանց տրվում է 12<sup>1</sup>/<sub>2</sub> աշխոր յուրաքանչյուր զլխի համար: Նրանք պարգևատրվում են վաստակած աշխորի 10 տոկոսի չափով: Յուրաքանչյուր ընկած կենդանու համար իջեցվում է 20 աշխոր:

Այստեղ ևս յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ պետք է ուժեղ պայքար մղել դիմազրկության դեմ, այնպիսի դեպքերի դեմ, յերբ կոլտնտեսության 100 ծնու ձիերի դիմաց ստացվում է ընդամենը 5—10 քուռակ:

Կոլտնտեսականները վոչ պակաս հոգս պիտի քաշեն և վոչ պակաս չափով պիտի պայքարեն կերի ծախսման մեջ յեղած դիմազրկության դեմ: Կոլտնտեսություններում քիչ չեն այն դեպքերը, յերբ շնորհիվ անփութության, հանցավոր անտարբերության, կերերը ծախսվում են անտնտեսավարի, առանց մի վորևե հաշվառքի: Ճանապարհներին, բակերում ու խոտներում կերի կորուստները կազմում են նրա կեսը: Այդպիսի անպատասխանատվության հետևանքով դաշտային ամենայնպես աշխատանքների ժամանակ ձիերը չեն ունենում բավականաչափ կեր: Ահա թե ինչու հարկավոր է մարտականորեն կատարել Հյուս. Կովկասի Յերկրկոլտնտնության վորոշումը, վորտեղ սսված է՝

«Պարտավորեցնել բրիգադիւրներին՝ ձիապանների միջոցով խիստ վերահսկողություն սահմանել յուրաքանչյուր կոլտնտեսականի բաց թողած կերի վրա: Անհրաժեշտ համարել քրեյական կարգով խիստ պատասխանատվության յենթարկել կերը հափըշտակելու կամ վոչ իր նպատակին գործադրելու համար և այդպիսի կոլտնտեսականներին հեռացնել կոլտնտեսությունից»:

Այսպիսով յերկրային կազմակերպությունները պարզ ցուցմունքներ են տալիս կոլտնտեսային ձիու հանդեպ դիմազրկության վերացման մասին: Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ կոլտնտեսականները, վորոնց աչքի առջև յերբեմն տեղի յե ունենում ամենավատ ու վնասա-

կար դիմազրկությունը, պետք է վճռականապես պայքարեն այդ չաբիքի դեմ: Կոլտնտեսային ձիու հանդեպ դիմազրկությունը պետք է իսկույն և յեթ և ամբողջովին վոչնչացվի:

## ԽԻՍ ՊՍԻԺ ԼԾԿԱՆԻ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻՆ

Վերացնելով դիմազրկությունը ձիերին խնամելու և նրանցով աշխատելու ասպարիզում, պետք է հիշել դասակարգային թշնամու՝ կուլակի վնասարարական գործունեության մասին: Կուլակության մնացորդներն ամենահետամնաց կոլտնտեսականներին դրդում են բարբարոսաբար վերարբեղել դեպի ձին: Այդպիսի վերաբերմունքի շնորհիվ ձին վնասվում է, դուրս է գալիս շարքից (որինակ, յերբ հղի ձիերին ստիպում են ծանր աշխատանք կատարել): Քիչ չեն այն փաստերը, յերբ կոլտնտեսության ղեկավարները մեջ այսպիսի կարծիք է աիրում. — բոլոր քայքայված և ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած ձիերին պետք է վոչնչացնել, փոխանակ կազմակերպելու նրանց լավագույն խնամքը:

Կուլակային տրամադրությունները և ձիու վորպես լծկան ուժի ոպորտունիստական թերազնահատումը ներկայումս պետք է բացատրել նրանով, վոր չկա ձիերի պահպանության պատասխանատվություն: Այս պատճառով, այդպիսի անպատասխանատվության ու դիմազրկության դեմ պայքարելու նպատակով ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողկոմխորհը մի առանձին վորոշմամբ պատասխանատվություն են սահմանում ձիերի ապորինի մորթուման և դիշակեր շահագործման համար:

Այդ վորոշումը թույլ է տալիս սպանել միայն աշխատանքի համար բացաձակապես անպետք ձիերին: Դրա համար պահանջվում է անասնաբույժի վկայագիրը, «վորը կարող է տրվել այն դեպքում, յեթ ձին տնտեսական ու ցեղային տեսակետից միանգամայն անպետք է»: Իսկ յեթե կոլտնտեսության մեջ ձին մորթվի ապորինի կերպով, ապա կոլտնտեսության մեղավոր անդամը, վորն այդ թույլ է տվել, արվում է դատի և դատարանի կողմից կարող է ամենախիստ պատժի յենթարկվել:

Նույնպիսի պատիժ է կրում կոլտնտեսականը, վորը դիտավորյալ կերպով փչացնում է ձին, կամ պարզապես դադարում է ֆլասաբարությունը, վորի հետևանքով ձին ընկնում է կամ դառնում անաշխատունակ:

Ընդհանրապես դեպի ձիերն անփութ վերաբերվելու և հղի ձիերով ծանր աշխատանք կատարելու համար (վորով ձին սատկում է, վիժում կամ ֆլասավում) մեղավորները նույնպես դատի յեն տրվում:

Իսկ յեթե անփութ խնամված ձին չի սատկել, ապա քրեյական պատժի փոխարեն մեղավորի վրա դիսցիպլինար տույժեր են դրվում՝ համաձայն կոլտնտեսութեան ներքին կարգ ու կանոնի և նրանից դրամական գանձումներ են արվում, կամ տուգանքներ վերցվում:

Այսպիսի գործերը քննվում են ժողովրդական դատարաններում, հերթից դուրս: Ամենակարևոր գործերը պիտի քննվեն կոլտնտեսային լայն մասսաների ներկայութեամբ:

Այսպիսով խորհրդային որենսդրութունը պահպան է հանդիսանում լիկանների պահպանութեան համար մղվող պայքարում: Պարզ է, վոր այնպիսի գործեր, ինչպիսին են ձիու «պատահարը» ընկնելը կամ ընկնելը, յերբ «Կոլտնտեսայ պրավդա» կոլտնտեսութեան անդամները գնում էին Նովոչերկասկ, կամ ձիու վերավորվելը «Կրասնոարմեյց» կոլտնտեսութեան մեջ (Նովոչերկասկի ուսյոն),—պետք է համարվեն հանցագործութուն և մեղավորները պետք է կանգնեն պրոլետարական դատարանի առաջ: Վորպեսզի նման հանցագործութուններին վերջ տրվի, կամ գոնե նրանք պակասեն, հարկավոր է ամենավճռական պայքար մղել կոլտնտեսային ձիու հանդեպ դիմադրկութեան դեմ:

### ՄՏԿ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԸ ՊԵՏԲ Ե ՄՇԱՎԱՆ ՏՐԱԿՏՈՐԻՍՆԵՐ ՈՒՆԵՆԱՆ

Դիմադրկութունը փչացնում է վոչ միայն կենդանի քարշող ուժը (լծկան ձիերն ու յեղները), այլ և մեքենաները—տրակտորները, շարժիչները և այլն: Բացի նրանից, վոր դիմադրկութունը ֆլասս է հասցնում, փչացնում է թանկարժեք տրակտորը կամ շարժիչը, նա, աշխատանքների յիռուն ժամանակ անպետքացնելով մեքենան, վիժեցնում է աշխատանքների ամբողջ պլանը: Ահա, որինակի համար, ինչ հետևանք է ունենում տրակտորի ջարդվելը գարնանային յիռուն դաշային աշխատանքների ժամանակ, յերբ թանկ է յուրաքանչյուր ժամը.—կախելու ժամանակ շարժիչի կանգ առնելը վիժեցնում է պլանը, ուշացնում է բերքահավաքը և այդպիսով բերքը փչանում է անձրևից: Մեր յերկամասի կոլտնտեսութուններում և մեքենա-տրակտորային կայաններում դրանից տասնյակ և նույնիսկ հարյուր հազարավոր ուրբիներն են ֆլասս ելինում:

Այդպիսի կորուստների պատճառն այն է, վոր հաճախ չի վորոշվում այս կամ այն անձնավորութեան պատասխանատվութունը մեքենայի պահպանութեան համար, կամ բացակայում է շահագրգռվածութունը մեքենայի կանոնավոր աշխատանքով: Առաջին դեպքում տրակտորը կամ այլ մեքենան մշտապես չեն ամրացված աշխատողներին: Նրանց վրա աշխատում է ամեն վոր, ով շատից-քչից ծանոթ է

մեքենային: Մեքենան ձեռքից ձեռք է անցնում: Յերբ այսոր աշխատում է մեկը, վաղը—մյուսը, մյուս ուրն էլ մի ուրիշը, սրանցից և վոչ մեկի վրա չի կարելի և վոչ մի պատասխանատվութեան դնել: Յեթե մեքենան ջարդվել է կամ ինչ-ինչ պատճառով կանգ է առել աշխատողի մեղավորութեամբ, տրվում է արհեստանոց, իսկ աշխատողն անցնում է ուրիշ մեքենայի կամ ուրիշ աշխատանքի:

Մի քանի դեպքերում էլ այնպես է լինում, վոր տրակտորիստն ամբողջված է մեքենային, բայց մեքենայի կանգ առնելու ժամանակ նա նույնքան աշխուրբ է ստանում, վորքան և աշխատելու ժամանակ: Այստեղ բոլորովին բացակայում է նրա շահագրգռված ությունը: Ներկա դեպքում ամենամեղիտակից կոլտնտեսականները կարող են դիտմամբ կանգեցնել մեքենան, անձնապես վոչ մի ֆլասս չլրելով: Սակայն դա մեծ ֆլասս կհասցնի կոլտնտեսութեան և մեքենա-տրակտորային կայանին:

Այս բոլորն արդյունք է դիմադրկութեան գոյութեան, կամ մեքենաների համար պատասխանատվութեան բացակայութեան:

Պարզ է, վոր այսպիսի յերևույթը տեղ չպիտի ունենա մեղանում. դիմադրկութեան—տրակտորի, մեքենայի այդ ամենաչար թշնամու դեմ պետք է անդադար ու վճռական պայքար մղել:

Տրակտորի, շարժիչի հանդեպ դիմադրկութունն արմատախիլ առնելու նպատակով անհրաժեշտ է ամենից առաջ նրանց ամբացնել մշտական աշխատող կոլտնտեսականների և նյութական շահագրգռվածութուն ստեղծել մեքենայի աշխատանքի ժամերի նկատմամբ:

Պետք է տրակտորներին ամբացնել մշտական տրակտորիստներ, վորոնք պատասխանատու լինեն տրակտորի ամբողջականութեան համար: Սակայն ամբացնելիս սխալներ էլ են լինում: Յերբմն կարծում են, վոր յեթե ձեռակոնորեն ամբացրել են, ուրեմն վերացրել են դիմադրկութունը: Սակայն գործնական աշխատանքում դարձյալ դիմադրկութեան է առաջ գալիս: Որինակ, 5—6 տրակտորներ ունեցող բրիգադում հանգստացողներին փոխարինելու համար լինում է մեկ պահեստի տրակտորիստ, վորն ամեն որ աշխատում է տարբեր տրակտորները վրա: Տրակտորները հանձնելիս մանրամասն ընդունելութուն են կատարվում, մանավանդ գիշեր ժամանակ: Այստեղից առաջ է գալիս այն, վոր վորեկ ֆլասսվածքի համար մեղքը գցվում է նախորդ աշխատողի վրա:

Դիմադրկութեան վերացմանը միանգամայն ձիշտ են մոտեցել Յիվյանսկի ուսյոնի Ռոմանովսկի ՄՏԿ-ում: Այստեղ յուրաքանչյուր տրակտորի ամբացրել են 3 տրակտորիստ, վորոնք պատասխանատու յեն մեքենայի և աշխատանքի քանակի ու վորակի համար: Մեկ տրակտորիստի հանգստի որը մյուս յերկուսն աշխատում են յերկու



հերթով: Դրա շնորհիվ Ռոմանովսկի ՄՏԿ տրակտորների աշխատանքի ժամերն ավելացել են—որակա՛ն 17 ժամի փոխարեն 21,5 ժամ: Հաշվել են այսպես, յերկու հերթով աշխատելիս տրակտորիստն աշխատում էր 8,5 ժամ ամեն մի հերթին: Յոթերորդ որը նա հանգստանում էր: Այսպիսով 7 որվա ընթացքում տրակտորիստն աշխատում էր 51 ժամ: Յերեք հերթով աշխատելիս, տրակտորիստը 2 որ աշխատում էր 10<sup>1</sup>/<sub>2</sub> ակա՛ն ժամ և 4 որ—7<sup>1</sup>/<sub>2</sub> ժամից մի քիչ պակաս: Ընդամենը յոթն որում (մեկը հանգստի որ) բանվորական ժամերը—50<sup>1</sup>/<sub>2</sub>, այսինքն կես ժամ պակաս: Յե՛վ այսպիսով հնարավոր յեղավ տրակտորի աշխատանքն ավելացնել 4<sup>1</sup>/<sub>2</sub> ժամով կամ 270<sup>0</sup>/<sub>5</sub>-ով և վերացնել դիմազրկությունը՝ հանգստի որերում փոխարինող տրակտորիստների աշխատանքում:

Ռոմանովսկու ՄՏԿ-նի փորձը պետք է ոգտագործել մյուս ՄՏԿ-ներում, ամեն կերպ հարմարեցնելով նրա տեղական պայմաններին, դաժան հարված հասցնելով դիմազրկության:

Դիմազրկության վերացման խիստ կարևոր հարցերից մեկն է նյութական շահագրգռվածությունը մեքենայի աշխատանքով: Անհրաժեշտ է սահմանել այնպիսի կարգ, վոր տրակտորիստը մեքենայի վրա աշխատելիս ավելի շատ վաստակի, քան մեքենայի կանգնած ժամանակ: Յեթե մեքենան կանգ է առել տրակտորիստի մեղավորությամբ, ապա նրա դադարի ժամանակ բոլորովին չպիտի աշխտեր տալ: Իսկ յեթե դադարն առաջացել է ՄՏԿ ղեկավարների (վերատեսչության կամ բրիգադիերի) մեղավորությամբ, ապա ամենից առաջ պետք է պատասխանատու լինեն ղեկավարները, իսկ դադարի ժամանակ տրակտորիստին պետք է պակասեցրած քանակով աշխտեր տալ:

Իսկապես, տարրինակ է, յերբ տրակտորիստը կանգնեցրել է մեքենան և դադարի ժամանակվա համար ստանում է նույնքան, ինչքան և մեքենան բանեցնելու ժամանակ: Վճարել դադարի համար, վորն առաջացել է տրակտորիստի մեղավորությամբ, նշանակում է խորացնել դիմազրկությունը, վիժեցնել պլանները, ավելացնել կորուստները: Դադարի համար, վորն առաջացել է վարչության մեղավորությամբ, ամբողջովին վճարել՝ նշանակում է վերացնել իր ժամանակին դործիքներ ու նյութեր պահանջելու պատասխանատվությունը: Տրակտորիստների բրիգադն իր ժամանակին պետք է հայտնե, թե նավթ թե կամ յուղը վերջանում է, հարկավոր է ուղարկել: Սակայն յեթե չկա պատասխանատվություն իր ժամանակին այդպիսի հայտարարություն անելու համար, ուրեմն և դա անհրաժեշտ չէ. աշխատում են տրակտորները, թե չեն աշխատում, միևնույն է, աշխտեր արվում են: Այս տեսակետից հարկավոր է որինակ վերցնել արդյունաբերությունից և չվախենալ այդպիսի նյութական պատասխանատվություն մտցնելուց:

Ընկ. Պոստիշեր 17-րդ կուսկոնֆերանսում ասաց.—

«Յերբ հարց բարձրացավ բանվորի մեղքով պարապուրդների վարձատրությունն ամբողջովին վերացնելու մասին, ինչպես և ձեռնարկության մեղավորությամբ պարապուրդների համար 50 տոկոս վճարելու մասին, առանձին տեսնավար ընկերներ և պրոֆեսիոնալներ չեյին համաձայնվում այդ միջոցառման: Սակայն վերջինս բացարձակապես անհրաժեշտ էր: Հարկավ. յեթե վճարել բանվորի մեղավորությամբ առաջացած պարապուրդների համար, ինչպես և ամբողջապես վճարել ձեռնարկության մեղավորությամբ յեղած պարապուրդների համար, ապա ձեռնարկության բանվորներն ու հրամկազմը վոչնչով շահագրգռված չեն լինի պարապուրդների դեմ կռվելու»:

Պարապուրդների համար պատասխանատվություն սահմանելը մի ձեշտ միջոց կլինի տրակտորի հանդեպ դիմազրկությունը վերացնելու համար:

ՄՏԿ տրակտորների վրա աշխատող կուտնտեսականներին նյութապես շահագրգռելու համար պետք է նաև ամեն ամիս կուտնտեսությունից կամ ՄՏԿ-նի միջոցով դրամական ավանս տալ վորի չափը «պիտի կախված լինի տրակտորի արտադրույթից կամ նրա զրությունից»: ՀԿ (բ) Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի, Յերկրգործկոմի ու Յերկրկուտնտախության այս վորոշումը հնարավորություն է տալիս լավագույն տրակտորիստին ավելի շատ ավանս տալ, իսկ վատին—ավելի քիչ: Սա հետամնացներին կստիպե առաջ գնալ, ավելի լավ հետևել մեքենային, ավելի լավ ու շատ աշխատել, հետևապես բարձրացնել մեքենայի և աշխատանքի արտադրողականությունը:

Տրակտորը քոող տրակտորիստների շահագրգռվածություն ստեղծելու հետ մեկտեղ, պետք է ստեղծել նաև ավագ տրակտորիստների շահագրգռվածություն, վորոնք նշանակվում են յուրաքանչյուր 5—6 տրակտորի համար և վորոնք պետք է պատասխանատու լինեն տրակտորների դրության և աշխատանքի հանդեպ: ՄՏԿ-ների այդ ավագ տրակտորիստներին, բացի նրանց վաստակած աշխտերից, գյուղատնտեսական տարվա ընթացքում պետք է նաև տալ 200—400 ուրլի, նայած տրակտորների արտադրույթին և նրանց դրության:

Այսպիսով կուտնտեսություններում և մեքենատրակտորային կայաններում, նյութական պատասխանատվություն, նյութական շահագրգռվածություն ստեղծելու միջոցով կվերացվի դիմազրկությունը: Այդ առանձնապես կարևոր է ներկայումս, յերբ կուսակցության Յեկրկոմն առաջադրություն է տված նախկին Կուբանի ուսյուններում վարի, ցանքի և բերքահավաքի մեքենայացումն ավարտել 1933 թվին, իսկ

յերկրամասի մյուս ուսումնական ու ազգային մարզերում, վորտեղ գերակշռում են հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաները,— 1934 թվին:

## ՊԱՏԱՍԻԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Յուրաքանչյուր տրակտոր գյուղատնտեսական վորոշ սեզոնի համար պետք է ունենա անհրաժեշտ կցվող ինվենտար,— գութաններ, ցանիչներ, տափաններ, խոտահնձիչներ, խուրձկապներ և այլն: Բացի այս մեքենաներից, 1932 թվին, բերքահավաքման կամպանիայում, յերկրամասի ՄՏԿ-ներում աշխատում էին ամենաբարդ գյուղատնտեսական մեքենաներ—700 կոմբայն, 250 պիկկեր: Ցանիչները, հնձիչները, խուրձկապները, կոմբայններն ու պիկկերները հատկապես իրենց վրա աշխատող կուլտնտեսականներ են պահանջում: Ամենից առաջ այս մեքենաների վրա աշխատելու համար (մանավանդ բերքահավաքման մեքենաների) պետք է մասնագետներ պատրաստվեն: Նրանք պետք է լավ գիտենան մեքենան, իր ժամանակին վերանորոգեն և պատրաստեն աշխատելու համար, բացի դրանից, յուրաքանչյուր մեքենայի վրա պիտի լինի հատուկ աշխատող, վորը պատասխանատու լինի աշխատանքի համար, ուրիշ խոսքով պետք է վերջ տալ դիմազրկութան՝ այս մեքենաներով աշխատելու ժամանակ:

Վորովհետև այդ մեքենաներն աշխատում են արակտորներով, ուստի նրանց աշխատանքը խանգարվելու դեպքում, կխանգարվի նաև տրակտորի աշխատանքը: Տրակտորի հանդեպ յեղած դիմազրկութան ֆլասան ամբողջովին ընկնում է նաև կցվող մեքենաների վրա: Ահա թե ինչու նույնքան ուշադրութուն պիտի դարձնել կադրերի ընտրութան, մեքենայի և նրա արտադրողականութան համար պատասխանատվութուն ստեղծելուն, վորքան և տրակտորին: Մեքենաներին մարդիկ պիտի ամրացվեն նաև ձիու քարշող ուժն ողտադործելիս:

Մեքենաները վորոշ կուլտնտեսականների պիտի ամրացվեն, հենց բրիգադում աշխատանքների պլանն ստանալուց անմիջապես հետո:

«Իրիգադը, վորին կուլտնտեսութան վարչութունը տվել է արտադրական առաջադրութուն, արտադրութան միջոցներ, հողամաս կամ տնտեսութան վորևե ճյուղ, անմիջապես, առաջադրութան համաձայն, կուլտնտեսականներին ամրացնում է քարշող ուժին, փոխադրական միջոցներին, մեքենաներին և այլն՝ մեկ տարի ժամանակամիջոցով, նրանց վրա դնելով նյութական պատասխանատվութուն» (Հյուս. Կովկ. Յերկրկուլտնտեսութան 1931 թվի հունվարի 19-ի վորոշումից):

Այսպիսով այս վորոշման կենսագործումը թույլ է տալիս իսկապես վորչնչացնել դիմազրկութունը մեքենաների հանդեպ: Առանց դրան մեքենան իր ժամանակին չի վերանորոգվի, լավ չի յուղվի, պիտի խանդարվի ու կանգ առնի: Վերջին հաշվով դրա հետևանքը կլինի պլանի վիժեցումը, մեծ կորուստներ, որինակ, գարնանացանի, բերքահավաքման ժամանակ և այլն:

Յուրաքանչյուր կուլտնտեսական, վորն աշխատում է մեքենայի վրա, պետք է հոգ տանի նրա մասին, պետք է հետևի, վոր նա աշխատի առանց ընդհատումների, վոր նա իր ժամանակին յուղվի: Իրանից կբարձրանա աշխատանքի արտադրողականութունը, մեքենան քիչ կմաշվի, իսկ դա կբարձրացնի թե ամբողջ կուլտնտեսութան և թե յուրաքանչյուր կուլտնտեսականի յեկամուտը:

## ՄԵՏ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ամեն մեկին հասկանալի յե մեքենաների, քարշող ուժի հանդեպ դիմազրկութան ֆլասը: Այս պատճառով շատ կուլտնտեսութուններում վճռական միջոցներ են ձեռք առնվում կուլտնտեսային միջոցների և արտադրութան այս ցեցի դեմ:

Արտադրութան խոշոր միջոցների հանդեպ յեղած դիմազրկութան հետ մեկտեղ, գոյութուն ունի նաև «մանր» բնույթ կրող դիմազրկութունը, վորի վրա բավականաչափ ուշադրութուն չեն դարձնում վոր կուլտնտեսութունների վարչութունները և վոր էլ իրենց կուլտնտեսականները:

Որինակ, խոշոր կուլտնտեսութան մեջ քաղհանի ժամանակ աշխատում է 300—400 մարդ, վորոնք զինված են համապատասխան (ձեռքի) գործիքներով: Յեթե տասը կուլտնտեսականներից մեկը կորցնի իր ձեռքի գործիքը, կկորչի 30—40 գործիք: Յեթե պահեստի գործիքներ չկան, ուրեմն 30—40 հոգի կմնան առանց աշխատանքի: Իսկ ինչից են առաջ գալիս կորուստները,—անվութութունից, պատասխանատվութան բացակայութունից:

Վերցնենք մի ուրիշ որինակ: Հացաբույսերի և խոտի հնձի ժամանակ հարկավոր են մեծ քանակությամբ փոցխեր և յեղաններ: Յուրաքանչյուր կուլտնտեսութան մեջ փոցխերն ու յեղանները կորչում են տասնյակներով, նույնքան էլ անպետքանում են, ջարդվում անփուլթ վարմունքի շնորհիվ: Այս բանը տեղի յե ունենում այն պատճառով, վոր չկա պատասխանատվութուն հանձնված գործիքների համար:

Վերջապես, մի որինակ ևս պարկերի մասին: Կուլտնտեսութուններում տարվա ընթացքում կորչում են հարյուրավոր պարկեր և նրանք

կորչում են այնպես զարմանալի կերպով.— մարդը վերադառնում էր ելեվատորից, նստել էր պարկերի վրա, իսկ տասը—տասներկու պարկից յերկուսը չկան: Արդարանում է միայն նրանով, թե կորել են: Այսպիսի դեպքերում վոչ վոք ուշադրութուն չի դարձնում, իբր թե մանր բան է, չարժի դրանով զբաղվել:

Յեթե հաշվենք քուլաների, յեղանների, փոցխերի, մտակների, պարկերի, պտուտակների, բանալիների և այլ մանր իրերի կորուստը, կատարվին հազարներ, յերբեմն ել տասնյակ հազար ուղբերներ: Բացի արժեքից, նրանց կորստի հետևանքով լինում է նաև ժամանակի, աշխատանքի, վորակի և այլ կորուստ:

Այսպիսի կորուստների միակ պատճառը դիմազրկութունն է— արտադրութայն գործիքների հանդեպ պատասխանատվութայն բացակայութունը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր մանր բանի համար պատասխանատվութուն դնել և այդ պատասխանատվութունն ապահովել կորուստեցականների ստանալիքից փանձուկներ կատարելով: Այս միջոցը մասնաշաղկապ բացատրական աշխատանքի հետ միասին: ճիշտ ճանապարհ կլինի դիմազրկութայն վերացման համար:

Հաճախ չեն գտնում գործնական մտեցում այդ «մանր» բաների հանդեպ՝ դիմազրկութունը վերացնելու համար: Չի վոր ինվենտարն ստացողի պատասխանատվութայն բաց թողնելու համար պետք է ըստորադրութուն վերցնել, իսկ կորուստեցականն անդրազեռ է: Ուստի «քաջքուլից» և «բյուրոկրատիզմից» խուսափելու համար նախապատվութուն է տրվում դիմազրկութայն: Ինչպես քաջքուլն, այնպես ել բյուրոկրատիզմը դիմազրկութայն հետ պետք է վոչնչացվեն կորուստեցութայն մեջ: Պետք է ճիշտ կազմակերպել և համառորեն իրագործել պատասխանատվութունը գործիքների համար:

Յուրաքանչյուր կորուստեցականի ստորադրութայն փոխարեն, պետք է ստորադրութուններ վերցնել խմբակավարներից, իսկ վերջիններս գործիքները, որինակ, փոցխերը կբաժանեն իրենց խմբակի կորուստեցականներին: Յեթե աշխատանքի վերջում մեկնումեկը լինի առանց փոցխի, իսկույն պիտի պարզել պատճառը և նրա մեղավորութայն դեպքում արժեքը դուրս գալ նրա ստանալիքից: Ամբողջ ձիասարքի համար կարելի չէ ստորադրութուն վերցնել և վոչ թե նրա յուրաքանչյուր առանձին պարագայի: Նույնը պիտի անել ցանիչի, գութանի ոճանդակ գործիքների կոմպլեկտի վերաբերյալ:

Այս կարգը պարտավորեցնում է առանձնապես խիստ հսկողութուն ունենալ աշխատանքից հետո մեքենաներն ու գործիքներն ընդունելիս: Յեթե ընդունողը թերացել է, չի հայտարարել կորստի մեղավորին, պատասխանատվութունն ընկնում է նրա վրա: Պատասխանատվութայն

նախկին թյան այս կարգը պետք է կիրառվի խստորեն, սկսած վարչութայն անդամներից ու բրիգադիւրներից մինչև շարքային կորուստեցականները:

Կորուստեցականների ուշադրութունը պիտի կենտրոնանա վոչ միայն խոշոր, նկատելի կորուստների վրա, այլ և առաջին հայացքից «մանր» բաների վրա, վորոնք կորուստեցութայն մեծ կորուստների պատճառ են դառնում: Բոլոր կորուստեցականների ուշադրութունը պիտի զորահավաքել՝ կորուստները և դիմազրկութունը վերացնելու համար:

## ԱՐՏԱԴՐՈՒՅՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՂԲՎԱԾՔՆԵՐ Ե ԱՌԱՋ ԲԵՐՈՒՄ

Կորուստեցային արտադրութունը պետք է կազմակերպվի միմիայն պլանի հիման վրա, վորը պիտի յենթարկվի պետութայն ժողտեսեսութայն միասնական պլանին: Կորուստեցութունը ռայոնական կազմակերպութայններից ստուգիչ առաջադրութուններ է ստանում ցանքերի տարածութայն և ստացվելիք ապրանքային արտադրանքի քանակութայն մասին: Հենց սրանով է արտահայտվում կորուստեցական պլանի յենթարկումն ընդհանուր ժողտեսեսական պլանին:

Ստուգիչ թվերի հիման վրա, կորուստեցութայն պլանում պետք է ճշտութայն նախատեսվի հետևյալը,— աշխատանքների կատարման ժամանակը, նրանց տեղը: Առաջադրութունը պիտի բաշխվի առանձին արտադրական միավորներին— բրիգադներին ու մասնաճյուղերին: Այսպիսով պլանը հանդիսանում է արտադրական առաջադրութունը կատարելու ծրագիր, վորից կարելի չէ շեղվել միայն բացառիկ դեպքերում:

Հաճախ կորուստեցութայն վարչութունը փորձում է տնտեսութունը վարել առանց պլանի: Արտադրական ֆինանսական պլանը կազմվում է ձևականորեն, իսկ արտադրութայն կազմակերպումը թողնվում է ինքնահոսին: Խոշոր տնտեսութունն առանց պլանի վարել անկարելի չէ և այս պատճառով նման կորուստեցութուններում տնտեսա-քաղաքական կամպանիաներում հաճախ ճեղքվածքներ են լինում:

Պլանի բացակայութունն ըստ էութայն կատարյալ դիմազրկութայն է մատնում արտադրութունը: Սկսած կորուստեցութայն վարչութունից մինչև շարքային կորուստեցականը վոչ վոք պատասխանատու չի լինում տնտեսավարման արդյունքների համար:

Վատ կազմված, կորուստեցականների կողմից չստացված պլանը դիմազրկութայն առիթ է տալիս արտադրութայն մեջ և չի կարող մի վորեն նշանակութուն ունենալ:

Իսկական պլանային արտադրութուն ստեղծելու նպատակով, յուրաքանչյուր կորուստեցութայն մեջ պետք է ուշադրութայն կազմվի արտադրական ֆինանսական պլան: Իսկ այդ պլանը լավ կկազմվի

միայն այն պայմանով, յեթե խիստ պատասխանատուութիւն լինի նրա վարչմեղու համար: Յուրաքանչյուր կոլտնտեսութեան մեջ, վարչութեան անդամներէն պիտի նշանակվի մեկը, վորը պիտի պատասխանատու լինի վորոշ ժամանակամիջոցում պլանը կազմելու համար: Վարչութեան այս անդամը պետք է նաև կազմի պլանային հանձնաժողով՝ լավագույն հարվածային կոլտնտեսականներից և փնտռե գործի տեխնիկական մասը կատարողներ, կազմակերպե հասարակայնութեանը պլանի մշակաքննութեան համար և այլն:

Պլանի կատարման ընթացքում ստուգումը ցույց կտանրա վորակը: Պլանի վորակի համար ամենից առաջ պատասխանատու յե վարչութեան համապատասխան անդամը:

Սակայն, յեթե ամբողջ պլանի համար պատասխանատուութիւն ստեղծվի, իսկ նրա առանձին ողակների վերաբերմամբ բացակայի այդ պատասխանատուութիւնը, ապա դիմադրկութիւնը չի վերացվի: Անհրաժեշտ է յուրաքանչյուր աշխատանքի համար պլանում նշել պատասխանատու անձանց: Որինակ, հացահատիկային մասնաճյուղի համար պատասխանատուութիւնը գնել վարչութեան այն անդամի վրա, վորը վարում է դաշտագործութիւնը, անասնաբուծութեան համար—այդ ճյուղում աշխատողի վրա և այլն: Այս մարդիկ պիտի մասնակցեն պլանի կազմելուն և իրագործման: Այսպիսով նրանք կզգան իրենց թույլ տված սխալները՝ պլանի կատարման ընթացքում: Պլանի կատարման ճեղքվածքների դեպքում կարելի յե նրանց հարցնել պատճառների մասին:

Պլանի կատարման պատասխանատուութիւնը պետք է կոնկրետ կերպով հասցնել յուրաքանչյուր կոլտնտեսականին: Ամեն մի կոլտնտեսական վաղորդք պիտի գիտենա այն աշխատանքները, վորն ինքը պիտի կատարե և այն նորմաները և սրանց գնահատումն աշխորերով, վորոնք նրան են վերաբերում: Պլանի մշակմանն ու քննարկմանը պիտի մասնակցեն բոլոր կոլտնտեսականները և պետք է գիտենան պլանային առաջադրութիւնը: Պատասխանատուութեան այսպիսի սխտեմը, սկսած վարչութեանից մինչև կոլտնտեսականները, լավագույն միջոցն է արտադրական-ֆինանսական պլանի կատարման ընթացքում դիմադրկութիւնը վերացնելու համար: Իրան պետք է ձգտեն բոլոր կոլտնտեսականները:

Բացի դրանից, դիմադրկութիւնը պիտի վերացվի արտադրութեան ամբողջ ղեկավարութեան մեջ: Անցյալներում կոլտնտեսութեանների աշխատանքի ամենաթույլ տեղը բանվորական ուժի կազմակերպումն էր: Կոլտնտեսութեաններում վոչ վոք լրջորեն չի զբաղվում բանվորական ուժի կազմակերպմամբ: Կոլտնտեսային արտադրութեան այս կարևորագույն խնդրում նման դիմադրկութեան հետեանքը լինում է

այն, վոր մի շարք կոլտնտեսութեաններում բազմաթիվ կոլտնտեսականներ չեն գնում աշխատանքի: Հաղվագրուտ չեն այն դեպքերը, յորք աշխատանքի յե գնում աշխատունակների 45—50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: Այս է յեղել պատճառը, վոր հերթական աշխատանքները չեն կատարվել լիովին և իր ժամանակին: Այստեղից—ճեղքվածքներ՝ ժամկետերի կատարման, միջոցների մորելիզացիայի ասպարեղում և այլն: Վարչութեանը հաճախ չի կարողանում կոլտնտեսականներին կազմակերպել աշխատանքի համար, վերջիններս պարապ ման են գալիս, մինչդեռ նույն վարչութեանն ասում է, վոր իբր թե կոլտնտեսութեան մեջ աշխատող ձեռները չեն բավականանում: Յեվ այդ ապացուցելու համար, կազմվում են բանվորական ուժի տասնյակ հաշվեկշիռներ, իսկ ճեղքվածքներն ավելի և ավելի յեն խորանում:

Սրա փայլուն ապացույցն այն ճեղքվածքներն են, վորոնք գոյութեանն ունեյին Յերկրկոլտնտնութեան ցրած յերեք կոլտնտեսութեաններում,—Լենինի անվան (Կուրգանսկի ուայոն), «Ձերվոնի պրապոր» (Սլավյանսկի ուայոն), և «Կրասնիյ կազակ» (Գեյորգիևսկի ուայոն)

Արտադրութեան պլանավորման, կառավարման դիմադրկութեանը դասակարգային արթնութեան թուլացման հետ միասին ունեցան այն հետեանքը, վոր բերքի մի մասը չհավաքվեց, աշնանավարի պլանները չկատարվեցին, աշնանացանը չկատարվեց ամբողջովին, չկատարվեց հացամթերումների պլանը:

Կոլտնտեսութեանները ցրելու մոմենտին (1931 թ. նոյեմբեր) Լենինի անվան կոլտնտեսութեան մեջ չեր հնձված 2,048 հեկտար, վորից 1700 հեկտարը—բամբակ: «Ձերվոնի պրապոր» կոլտնտեսութեան մեջ ամբողջ ցանքի մեկ քառորդ մասը չհավաքվեց: Հացամթերումների պլանը կատարվեց—«Կրասնիյ կազակ»-ում—35<sup>0</sup>/<sub>0</sub>-ով, «Ձերվոնի պրապորում»—70<sup>0</sup>/<sub>0</sub>-ով և Լենինի անվան կոլտնտեսութեան մեջ—62<sup>0</sup>/<sub>0</sub>-ով: Ծնորհիվ պատասխանատուութեան կատարյալ բացակայութեան, անիութութեան և ինքահոսի վրա հույս դնելուն, «Ձերվոնի պրապոր» կոլտնտեսութեան մեջ հափշտակվեց մինչև 2000 ցենտներ ցորեն և մոտ 5 հազար ցենտներ յեզիպտացորեն:

Այս փաստերը ցույց են տալիս, վոր արտադրութեան ղեկավարման մեջ դիմադրկութեանն և ինքնահոսը ձեռնտու յեն կուլակութեան վորն այստեղ առատ հունձ է ունենում: Կուլակային ազդեցութեան արդյունքը լինում է այն, վոր վիժում է արտագնացութեան պլանը:

Դիմադրկութեանը բույն է դնում նաև աշխատանքի հաշվառման գործում:

Հաճախ առանձին կոլտնտեսութեաններում ու բրիգադներում բացակայում է պատասխանատուութիւնը աշխատանքի ճիշտ և ժամանակին հաշվառման համար, չնայելով, վոր բրիգադներում կան հաշվա-

սիչներ: Շնորհիվ այն հանգամանքի, վոր հաշվառիչը, ըստ ընդունված կարգի, բրիգադի հետ դաշտ չի դնում, այլ շարունակ գտնվում է զյտարում, նա հաշվառքը կատարում է լոկ թղթի վրա: Մինչդեռ նա հաշվառքը պիտի կատարե դաշտում, բանջարանոցում, այգում,—այնտեղ, վորտեղ աշխատում է բրիգադը, վորտեղ ճիշտ կարելի յե վորոշել աշխատանքի քանակն ու վորակը: Աշխատանքի այդպիսի թղթե հաշվառքն այն հետևանքն է ունենում, վոր բրիգադի կամ խմբակի ընդհանուր արտադրույթը նա բաժանում է աշխատողների թվի վրա և միատեսակ քանակությամբ աշխուրբ է գրում թե հարվածայինին, թե ծուլին, այսինքն տարածում ու խորացնում է հավասարանքը: Ահա թե ինչու անհրաժեշտ է ստուգել, թե ինչպես է կատարվում աշխատանքի հաշվառքը, ինչպես է վորոշվում վորակն ու քանակը: Հարկավոր է բրիգադի ղեկավարի և հաշվառիչի պատասխանատվություն ստեղծել հաշվառքի վորակի համար, մի բան, վոր բացակայել է մի քանի կուտնտեսություններում:

Աշխատանքի հաշվառքի մի ցավոտ կողմը հաշվառիչների հաճախակի փոփոխությունն է: Գարնանացանի ընթացքում հաճախ փոխվում են 2—3 հաշվառիչներ: Այսպիսի հոսունությունը պարզապես տանում է դեպի դիմադրկություն, դեպի անպատասխանատվություն հանձնարարված աշխատանքի համար: Հավասարանքը, աշխատանքային գրույկներում համապատասխան գրանցումների բացակայությունը նպաստում են աշխատանքի դիսցիպլինայի և նրա արտադրողականության անկման:

Այսպիսով կառավարման ապարատի բոլոր ողակներում պետք է վերացվի դիմադրկությունը, վորը պաճառ է դառնում արտադրական առաջադրությունների վիժման, պետությանը ապրանքային արտադրանքը հանձնելու (ծախելու) պարտավորությունը չկատարելուն, միջոցների հավաքման ու պարտքերի հատուցման ճեղքվածքների:

Վերջապես, հարկավոր է կանգ առնել նաև այն դիմադրկության վրա, վոր նկատվում է ֆինանսական տնտեսությունը, այսինքն՝ կուտնտեսության միջոցների յեղքն ու մուտքը կազմելու մեջ:

Կուտնտեսության մեջ, ինչպես գյուղատնտեսական մեծ ձեռնարկության մեջ, դրամարկղով անցնում են դրամական մեծ գումարներ: Փողերն ստացվում են տնտեսության արտադրանքը ծախելուց, իբրև կոնտրակտացիայից ստացված ավանսներ, արտադրության լայնացման ու շինարարական վարկեր, ապահովագրական գումարներ՝ փչացած ցանքերի, կենդանիների (ապահովագրված, համար և այլն): Բացի դրանից, կուտնտեսության մեջ ստացվում են մուտքի վճարներ, անդամների ավանդեր և կուտնտեսականների նպատակային մուծումներ: Ինչպես տեսնում ենք, այս միջոցներն ստացվում են զանազան

աղբյուրներից և զանազան նպատակներով: Յեթե, որինակի համար, խողանոցի կառուցման համար ստացված վարկը ծախսվում է կուտնտեսականներին ավանս տալու համար, ապա խողանոցը չի կառուցվի, տեղերը կմնան բաց յերկնքի տակ: Վատ պահվելով, նրանք վատ և քիչ արտադրանք կտան: Ուրեմն միջոցները վոչ իր նպատակով ծախսելը քիչ ևս հասցրեց կուտնտեսության:

Այստեղից բխում է մի անհրաժեշտություն,—կատարել բոլոր միջոցների ճիշտ հաշվառք, վերացնել դիմադրկությունը նրանց ոգտագործման մեջ և ծախսերը կատարել ըստ նախահաշվի: Ուրիշ կերպ չի կարելի: Հաճախ յերկրորդական աշխատանքները կատարվում են այն միջոցների հաշվին, վորոնք նշանակված են առաջնակարգ կարիքների համար:

Առանձնապես այդ վերաբերվում է այն միջոցներին, վորոնք հատկացվում են հասարակական ֆոնդերին, վորոնց մի մասը սոցիալիստական կուտակման ֆոնդ է (անբաժանելի միջոցներ): Յեթե, որի լիստական կուտակման ֆոնդը ծախսել ուրիշ նպատակ, հարվածայինների պարզևատրման ֆոնդը ծախսել ուրիշ նպատակով, ուրեմն հնարավոր չի լինի պարզևներ տալ և նպաստել հարտակով, ուրեմն հնարավոր չի լինի պարզևներ տալ և նպաստել հարվածայնության: Յեթե անբաժանելի ֆոնդը բաժանվի, ապա չի աճի կուտակված տնտեսությունը, վորը պիտի զարգանա ընդլայնված վերարտադրության հիմունքով:

Ահա թե ինչու հատուկ ֆոնդերի ծախսման մեջ դիմադրկությունը վերացնելու նպատակով, պետք է այդ ֆոնդերը դանձվեն դրամով և առանձին հաշվառման պիտի յեթարկվեն: Շատերը չեն պահպանում այս կանոնը, տիրում է դիմադրկությունը և միջոցներն ճիշտ ոգտագործման պլանը վիժում է: Այստեղ պատասխանաների ճիշտ ոգտագործման պլանը վիժում է: Այստեղ պատասխանատվությունն ընկնում է կուտնտեսության հաշվետարական մասի վրա:

Ֆինանսական տնտեսության կառուցման վոչ պակաս կարևոր խնդիր է հանդիսանում վարչության պատասխանատվությունը միջոցներ ստանալու և ծախսելու համար: Գործնականում կարելի յե նկատել այնպիսի յերևույթներ, յերբ միջոցները տնորինում են վարչության բոլոր անդամները, սակայն վոչ մեկը լրջորեն պատասխանատվություն չի կրում: Կուտնտեսային աշխատանքի այս կարևորագույն բնագավառում նման դիմադրկությունն առաջ է բերում այնպիսի յերևույթներ, որոնք ինչպիսին են գերածախսերը, միջոցները վոչ իրենց նպատակով ոգտագործելը, ֆինանսական տնտեսության ճեղքվածքները:

Ահա թե ինչու յուրաքանչյուր կուտնտեսության մեջ պետք է ընտրվի վարչության մի անդամ (նախագահը), վորը պետք է տնորինեն միջոցները և լիովին պատասխանատու լինի նրանց համար:

Այսպես ուրեմն, վերացնելով դիմադրկությունը կուտնտեսության աշխատանքի առանձին բնագավառների ղեկավարման մեջ, կարելի յե

իսկապես պլանով կազմակերպել կոլտնտեսային արտադրութիւնը, կազմակերպչորեն տնտեսապես ամրապնդել կոլտնտեսութիւնները, վորը հրատապ խնդիր ե հանդիսանում:

### ՎԵՐԱՑՆԵԼ ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ—ՍԱ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ե

Կոլտնտեսութիւնները կազմվեցին գյուղացիական մանր տնտեսութիւններից՝ նրանց արտադրական միջոցները պարզապես ի մի հավաքելով: Յերկրի ուժեղ թափով ինդուստրացումը, մասնավորապես լայնորեն դարգացող գյուղատնտեսական մեքենաշինարարութիւնը թույլ տվեց սոցիալական ու տեխնիկական խորը վերակառուցման յենթարկել գյուղատնտեսութիւնը:

«Սորհրդային Միութիւնը մանր և մանրագույն յերկրագործութիւնից վերածվեց աշխարհումս ամենախոշոր յերկրագործութիւն յերկրի՝ կոլեկտիվացման, խորհրտնտեսութիւնների ծավալման և մեքենայական տեխնիկայի լայն գործադրութիւն հիմունքով»: (17-րդ կուսկոնֆերանսի բանաձևը):

ԽՍՀՄ-ում ավարտված ե սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Լենինյան «ով՝ ում» հարցը թե քաղաքում և թե գյուղում վերջնականապես լուծված ե հոգուտ սոցիալիզմի: Սակայն այս չի նշանակում, վոր մենք արդեն ապրում ենք անգասակարգ հասարակութիւն մեջ: Կուլակութիւն և բոլոր ջարդված պարագիտ դասակարգերի թափթփուկներն իրենց վերջնական կործանման որերում կատարի դիմադրութիւն են ցույց տալիս:

Կոլտնտեսականները, յերեկվա մենատնտեսները կոլտնտեսութիւն են բերել մանր սեփականատիրական տնտեսութիւն շատ մնացորդներ ու սովորութիւններ: Կոլտնտեսականների հետամնաց մասն աշխատում ե «շատ բան պոկել, չաշխատել, աշխատանքը զցել ուրիշների վրա և այլն» (Յակովլև): Կա այսպես մտածող կոլտնտեսական.— «յեթե իմ տնտեսութիւնը լիներ, յես գործն ավելի լավ կանայի, իսկ կոլտնտեսութիւնն այսքանն ել բավական ե»:

Կասկածից դուրս ե, վոր կոլտնտեսականների այդպիսի տրամադրութիւնները կվերանան այն չափով, ինչ չափով կբարելավվի կոլտնտեսութիւնը, ինչ չափով նա կուժեզանա՝ մեքենայական տեխնիկայի, բարձր ազրոտեխնիկայի, աշխատանքի ճիշտ կազմակերպման, յեկամուտներն ըստ աշխատանքի քանակի ու վորակի բաշխելու հիմունքով և այլն: Սակայն այսոր անհատական տնտեսավարման այդ մնացորդները դեռ կան և նրանց ջղաձգորեն կառչել են կուլակութիւն մնացորդները: Այս բազան սնում ե աջ ոպորտունիզմի արմատները,

աջ ոպորտունիզմի, վորը ներկուսակցական դիւսավոր վտանգն ե ներկա ետապում և վորն ուժեղանում ե «ձախ» ֆրազյորներով և խոտորիչներով:

Կուլակը հրահրելով հետամնաց կոլտնտեսականների մանր-սեփականատիրական տրամադրութիւնները, վերջիններս ոգտագործում ե կոլտնտեսային գույքի վոչնչացման համար: Այստեղ կուլակին անուղղակի կերպով ոգնում են աջ և «ձախ» ոպորտունիստները: Արտադրութիւն միջոցների ոգտագործման ասպարիզում յեղած դիմադրկութիւնը հնարավորութիւն ե տալիս այդ մանր-սեփականատիրական տրամադրութիւնները կոնկրետ կերպով արտահայտելու: Ահա թե ինչու կուլակը դիմադրկութիւն կողմնակից ե: Ահա թե ինչու պետք ե վճռական պայքար մղել դիմադրկութիւն դեմ: Դիմադրկութիւն վերացումն ուժեղ հարված ե կուլակային մնացորդներին:

Կոլտնտեսութիւններում դիմադրկութիւն դեմ պայքարելիս, պետք ե կոլտնտեսականների մեջ մանր-սեփականատիրական ձգտումները հաշվի առնել նաև մի այլ տեսակետից.— հայտնի յեն այնպիսի փաստեր, յերբ յուրաքանչյուր կոլտնտեսականի ամրացում են կոլտնտեսութիւն ընդհանուր վարելահողի մի մասին, ձիերը բաժանում են ծխերի վրա, իբր թե դիմադրկութիւն դեմ պայքարելու համար և են ծխերի վրա, իբր թե դիմադրկութիւն դեմ պայքարելու համար և այլն: Պետք ե վճռականապես պայքարել դիմադրկութիւն դեմ կըուլային: Պետք ե վճռականապես պայքարել դիմադրկութիւն դեմ կըուլային: Մոլորտով 17-րդ կուսկոնֆերանսում խոսելով կոլտնտեսութիւններում դիմադրկութիւն դեմ պայքարելու առանձնահատկութիւններին մասին, ինչպես և այն մասին, վոր անթույլադրելի յե պետական սոցիալիստական ձեռնարկութիւններից դիմադրկութիւն դեմ պայքարելու փորձը կուրորեն տեղափոխել կոլտնտեսութիւնները, հատկապես շեշտեց հետևյալ միտքը.—

«Սակայն վոչ պակաս նշանակութիւն ունի նաև այն, վոր կոլտնտեսութիւններում արտադրութիւն միջոցների (հողամաս, ձի) վերաբերմամբ դիմադրկութիւն դեմ պայքարելիս, հաշվի առնվի այնպիսի վորոշումների կանխումը, վորոնք կարող են նպաստել մանր-սեփականատիրական տրամադրութիւններին և վորոնք, հետևապես, կտանեն դեպի կոլտնտեսութիւն քայքայումը»:

17-րդ Համամիութենական կուսկոնֆերանսը, վոր տեղի ունեցավ 1932 թվի հունվարի 30-ից մինչև փետրվարի 4-ը, առաջին հնգամյակի արդյունքների հիման վրա առաջադրեց.— 2-րդ հնգամյակում կապիտալիստական քարքեր յեվ բնդհանրապես դատակարգեր վերջնակապիտալիստական գլխավոր քաղաքական խնդիրը: Այսպիսով 2-րդ հնգամյակի վերջում հիմնականում կավարտվի անդառակարգ սոցիալիստական

կան հասարակության կառուցումը: Հողագործական աշխատանքը կդառնա ինքուստ աշխատանքի մի ճեռակը:

Սակայն աշխատանքի ընթացքում անխուսափելիորեն պիտի շարունակվի պարադիտ դասակարգերի վերացվող մնացորդների դիմադրությունը:

Այս առթիվ կոնֆերանսի վերջին օրը.—

«Այդ նշանակում է, վոր հետագայում ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումը առանձին մոմենտներում, մանավանդ առանձին ուսուցանողական և սոցիալիստական շինարարության առանձին ճակատամասերում»:

Կուսակցության 17-րդ կոնֆերանսի այդ նախատեսումն ամենացայտուն կերպով հաստատվեց 1932 թվի աշնանը՝ առանձնապես Հյուսիսային Կովկասում, յերբ նախկին Կուբանի շրջանի ուսուցանողական կուլակության մնացորդներին հաջողվեց կազմակերպել հակահեղափոխական սաբոտաժ հացամթերումներ և աշնանացանի ասպարիզում:

Ինչպես հայտնի յե, Կուբանի հողերը չափազանց բերքատու հողեր են: Իզուր չէ, վոր դեռ հնուց Կուբանը համարվում էր Ռուսաստանի հացի շտեմարանը: Կուբանի կոլտնտեսությունները, մանավանդ վերջին տարիներում, ստացան մեծ քանակությամբ կատարելագործված գյուղատնտեսական մեքենաներ, գրեթե բոլոր արտեղներն սպասարկվում են մեքենատրակտորային կայաններով: Պետությունը հսկայական գումարներ, կարճատև և յերկարատև վարկեր արամադրեց Կուբանի կոլտնտեսականներին և կոլտնտեսություններին՝ նրանց կազմակերպչորեն և տնտեսապես ամրապնդելու համար: Թվում էր, թե կոլտնտեսություններն իրենց հերթին պարտավոր են բարեխղճորեն կատարել պետության նկատմամբ հանձն առած իրենց պարտավորությունները, ժամանակին և լրիվ կատարել հացամթերումները, ավարտել աշնանացանքն ու աշնանավարը, ամբարել սերմացուն դարձնան ցանքսի համար: Սակայն այսպես չկատարվեց: Ենորհիվ ուսուցանողական կուսակցական կազմակերպությունների չափազանց վատ աշխատանքներին, իսկ մի շարք կոմունիստների ուղղակի դավաճանության, շնորհիվ դիմադրություն և ղեկավարության վատության, որտադրվելով կոլտնտեսականների հետամնաց մասի մանր բուրժուական, սեփականատիրական, կորդուղական արամադրությունները, կուլակային մնացորդներին հաջողվեց կազմակերպել հակահեղափոխական սաբոտաժ հացամթերումներ և աշնանացանի ասպարիզում:

Բերքահավաքի ընթացքում կուլակային գործակալները, հետամնաց կոլտնտեսականներից շատերն սկսեցին հափշտակել կոլտնտեսային հացահատիկը, գողանալ և թաղցնել պետությունից: Կուսակցու-

թյան և կառավարության վորոշումը հասարակական սեփականության անձեռնմխելիության մասին՝ տեղական կուսակցական և խորհրդային մարմինների կողմից գրեթե անտես առնվեցին և սոցիալիստական գույքը հափշտակողներն անպատիժ մնացին:

Իսկ յերբ անհրաժեշտ էր կատարել պետության նկատմամբ հանձն առած պարտավորությունները, հանձնել (ծախել) հացը պետության, քաղաքի աշխատավորության, Կարմիր բանակի մատակարարման և պետական այլ կարիքների համար—կուլակային տարրերը ամեն գույնի սոյորտունիստների հետ միասին աղաղակ բարձրացրին այն մասին, վոր պետության հանձնելու համար հաց չունեն:

Կուլակային սաբոտաժի կազմակերպման մեջ մեծ պետություն հանդես բերին և յերբեմն նաև գլխավորեցին քոլխայված, կուլակի բերան հանդիսացած մարդիկ, վորոնք կուսակցական տոմս ունեյին իրենց գրքապանում: Այսպես, Կուբանի կոլտնտեսություններից մեկի կուսակցական բջիջի քարտուղար Կոտովը, հափշտակելով կոլտնտեսային հացահատիկը, թաղցնելով այդ հաշվառումից, հրավիրում է բջիջի անդամներին դադարի ժողովի և խտորեն պատվիրում չհայտնել այդ մասին իշխանության մարմիններին, սպառնալով, վոր հակառակ դեպքում «դավաճանը» մահվան պատժի կենթարկվի:

Կուսակցության Յերկրային Կոմիտեն բազմաթիվ անգամներ նախադրուշարեց բոլոր կուսակազմակերպություններին, կոլտնտեսականներին, վոր պետական պլանների կատարումը պարտադիր է, վոր կուսակցությունը չի կարող թույլ տալ հացամթերումների պլանների թերակաթյունը, վորովհետև «պայքարը հացի համար—պայքար է սոցիալիզմի տարումը, վորովհետև «պայքարը հացի համար» (Լենին), վոր քաղաքի աշխատավորությունը, գործարանների համար» (Լենին), վոր քաղաքի աշխատավորությունը, գործարանների համար» (Լենին), վոր քաղաքի աշխատավորությունը, գործարանների համար» (Լենին), վոր քաղաքի աշխատավորությունը, գործարանների համար» (Լենին) և Կարմիր բանակը պետք է լրիվ չափով ապահովվեն հացով և վոր պլանները չկատարումը կատարել կառավարությանը ամենախիստ միջոցներ ձեռք առնելու սաբոտաժների նկատմամբ:

Սակայն Յերկրային Կոմիտեյի այդ նախադրուշարումները քչերի վրա միայն ազդեցին, իսկ մեծամասնությունը շարունակեց դիմադրել խորհրդային իշխանության միջոցառումներին: Յեվ ահա այդ ժամանակ էր, վոր կուսակցության Յերկրային Կոմիտեն դիմեց ամենախիստ միջոցների կուլակային սաբոտաժ խորտակելու մասին: Ամենահետամնաց և չարակամ ստանիցները, ինչպիսիք էին Մեդվեդովսկայա (Տիմաշևսկու ուսուցիչ), Պրտավսկայա (Պավլովսկու ուսուցիչ) և այլն զբղվեցին սև տախտակին: Սև տախտակին հանված ստանիցներին արգելվեց կոլտնտեսային առևտուրը, դուրս բերվեցին բոլոր տեսակի արդյունաբերական ապրանքները և ուղարկվեցին այն ուսուցանողները, վորտեղ կատարել են հացամթերումների պլանը: Մյասնիկյան ուսուցիչն, որի կատարել են հացամթերումների պլանը: Մյասնիկյան ուսուցիչն, որի կատարել են հացամթերումների պլանը: Մյասնիկյան ուսուցիչն, որի կատարել են հացամթերումների պլանը: Մյասնիկյան ուսուցիչն, որի կատարել են հացամթերումների պլանը:

հատկացվեց 100 հազար ռուբլու արդյունաբերական ապրանքներ՝ պլանից դուրս: Կուլակային ակտիվ տարրերը, նախկին սպիտակ զվարդիականները, վորոնք մինչև այժմ մնացել էին սաբոտաժ կազմակերպած ռայոններում և գլխավորում էին այդ սաբոտաժը՝ արտաքսվեցին յերկրամասի սահմաններից: Կուլակները բանակն անցած «կոմունիստները», կուսակցության դավաճանողները դուրս արվեցին կուսակցությունից և Կոտովի նման բացարձակ հակահեղափոխականները պրոլետարական ղատարանի վճռով գնդակահարվեցին: Կուսակցությունն սկսեց առաջին հերթին Կուբանի ռայոններում կուսարքերի գտումը բոլոր քայքայված, ուղորտունիստական, սաբոտաժ գլխավորող տարրերից: Հազարավոր առաջավոր բանվորներ, կոմունիստներ և կոմյերիտականներ ռայոնները մեկնեցին՝ խորտակելու կուլակային սաբոտաժը և կատարելու առաջնակարգ նշանակություն ունեցող քաղաքա-տնտեսական կամպանիաները: Կուսակցությունը կանգ չառավ անգամ արտաքսելու յերկրամասի սահմաններից Պրոտավսկայա ստանիցի բնակիչներին (բացի խորհրդային իշխանություն համար և կուլակություն դեմ պիտիվ պայքարողները և այնտեղ գտնվող կոմունայից), մի ստանից, վորն անցյալում կաղակային հակահեղափոխության բուլնն է հանդիսացել և ներկայումս համառ կերպով շարունակում է կուլակային սաբոտաժը հացամթերումների ասպարեզում:

Իսասկարգային թշնամու գիմադրությունը, նրա կազմակերպած սաբոտաժը խորտակելու և փշրելու համար, խորհրդային իշխանությունը չի վարանում այդպիսի խիստ միջոցների դիմելու, քանի վոր այդ են պահանջում բանվոր դասակարգի շահերը, սոցիալիստական շինարարության կենսական շահերը: Կուբանի բարեբեր հողերի վրա տիրապետել կարող են միայն բարեխիղճ, խորհրդային իշխանության նվիրված կուլտնտեսականները: Սաբոտաժիկները և կուլակները գործ չունեն այնտեղ: Հողը պրոլետարական պետության սեփականությունն է և նա պարտավոր է հատկացնել նրանց, վորոնք չեն դավի այդ պետության և բանվոր դասակարգի դեմ:

Կուբանի դասերը մի անգամ ել ցույց տվին, թե ինչ հսկայական նշանակության ունի կուլտնտեսությունների ճիշտ և բուրժուական ղեկավարությունը, գիմադրության վերացումը կուլտնտեսային մասսայի սոցիալիստական վերադաստիարակման սիստեմատիկ և համառ աշխատանքը: Առաջ բերել, գլխավորել կուլտնտեսային ակտիվը, կազմակերպել նրան կուլակության դեմ, մաքրել կուսակցության կազմակերպությունը դավաճաններից և քայքայվածներից, ուժեղացնել կուսակցական կադրերը—ահա թե ինչ են ասում Կուբանի դասերը:

Պետք է հիշել, վոր կուլտնտեսային արտադրության մեջ կան թույլ ողակներ, վոր կապիտալիզմն իր վերջին դիրքերը չի զիջում

առանց կատարել կովի և վոր թույլ ողակները պետք է ամրապնդվեն՝ կապիտալիստական տարրեր դեմ վերջին կովի համար:

Այժմ գիմադրությունը թուլացնում է կուլտնտեսային արտադրությունը: Կուլտնտեսային գյուղացիներին անդասակարգ սոցիալիստական հասարակության անդամներ դարձնելու հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես յուրաքանչյուր կուլտնտեսական, գործնականում իրադրոժելով կուսակցության վորոշումները, կպայքարի կուլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման համար, ինչպես կվերացնի գիմադրությունը—կուլտնտեսային արտադրության այդ ամենամեծ չարիքը:

Համամիութենական կուսկոմիտեանս արդյունաբերության վերաբերմամբ հաստատուն դիրքերի ստեղծումը այն մասին, վոր—

«Պետք է վերջ տալ գիմադրության, յուրաքանչյուր սարքոցի, յուրաքանչյուր մեքենայի, յուրաքանչյուր ագրիգատի և աշխատանքի տեղի ամրացնել մշտական աշխատող, վորը պատասխանատու լինի նրանց համար, արմատախիլ անել գիմադրությունը վերանորոգման, խտտանի, ձեռնարկության մեջ արտադրանքը մի ցելից մյուսը և մի սարքոցից մյուսն անցնելու գործում»:

Այս դիրքերի վրա պետք է կատարվի նաև կուլտնտեսությունների, ինչպես կուսակցության մարտական հրամանն այն պայքարում վոր մղվում է ԽՍՀՄ-ում անդասակարգ սոցիալիստական, հասարակաթյուն կառուցելու համար:





ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կովել Ղիմազրկութեան դեմ, նշանակում և կովել կոլտնտեսութիւններէ կատարած  
մակերազման-տնտեսական ամբաստանուման համար . . . . . 2

Քրիզադներին ամբաստանելով հողամասերին, վերացնել Ղիմազրկութիւնը հողա-  
մշակման մեջ . . . . . 7

Ղիմազրկութեան վերացումով թաղերը կուլակային հալածարանքը . . . . . 14

Ղիմազրկութիւնը փչացնում և կոլտնտեսութեան ձին . . . . . 18

Խիստ պատիժ լծկանի վնասարարներին . . . . . 25

ՄՏԿ տրակտորները պետք և մշտական տրակտորիստներ ունենան . . . . . 26

Պատասխանատուութիւն յուրաքանչյուր գյուղատնտեսական մեքենայի համար . . . 30

Մեծ կորուստներ Ղիմազրկութիւնից . . . . . 31

Արտադրութեան ղեկավարման Ղիմազրկութիւնը ճեղքվածքներ և առաջ բերում . 33

Վերացնել Ղիմազրկութիւնը—սա կուսակցութեան մարտական առաջադրութիւնն և 34



Отв. редактор  
В. К. Цовьян  
Техн. редактор  
Г. М. Маркарьян.

№ 2967  
ԲС—1  
а—18

Сд. в набор 3/XII—1934  
Сд. в печать 19/1—1934  
Об'ем 29 1/2 листа  
Тираж 2000 экз.

Уполкрайлита № 07121 Газ.-ин. тип. СККПО. Статформат А5-148x210 Заказ № 52  
Гор. Ростова на Дону.



724

7247-11



На армянском языке

В. Е. АНДРЕЕВ

ОБЕЗЛИЧКА — ВРАГ КОЛХОЗА

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

Հ.Ր.Պ.Զ.ԵՍԵ

ՈՍՍՏՈՎ-ՂՈՆ, ՍՈՍՈՎՈՍՏԱՅԱ ՓՈՂ. 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՆԳՈՅԵՆՏՐ)